Հավելված
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահի
2026 թվականի հոկտեմբերի 14-ի
թիվ 1/406 Լ որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԱՐՏԱՔԻՆ ՀԱՏՎԱԾԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՁԵՌՆԱՐԿ

Երևան 2026 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ 4

2.ՎՃԱՐԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌՆ ՈՒ ԴՐԱ ԿԱԶՄՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ 5

3.ՎՃԱՐԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 8

4. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԴԻՐՔ..... 31

5. ՀԱՄԱԽԱՌՆ ԱՐՏԱՔԻՆ ՊԱՐՏՔ..... 33

6. ԱՐՏԱՔԻՆ ՀԱՏՎԱԾԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ 34

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՀՀ ՎՃԱՐԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻ, ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԴԻՐՔԻ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՊԱՐՏՔԻ ԿԱԶՄՄԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ.....37

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

1. **ՀՀ** - Հայաստանի Հանրապետություն
2. **ԿԲ** - Կենտրոնական բանկ
3. **ԱՄՀ** - Արժույթի միջազգային հիմնադրամ
4. **ՏՏՍՈԱԿ** - Տնային տնտեսությունները սպասարկող ոչ առևտրային կազմակերպություն
5. **ԵԱՏՄ**- Եվրասիական տնտեսական միություն
6. **ԱՏԳԱԱ**- Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ
7. **ՍԻՖ**- CIF (Cost insurance freight)
8. **ՖՕԲ** - FOB (Free on board)
9. **ԱՉՖՄԾ** - Անուղղակիորեն չափվող ֆինանսական միջնորդության ծառայություններ
10. **ՀՓԻ** - Հատուկ փոխառության իրավունք
11. **ԾԻԳ**- Ծրագրերի իրականացման գրասենյակ

Գլուխ 1. Ընդհանուր դրույթներ

1. Սույն Ձեռնարկի նպատակն է ներկայացնել վճարային հաշվեկշռի, միջազգային ներդրումային դիրքի և համախառն արտաքին պարտքի (միասին՝ արտաքին հաշիվներ) կազմման հիմնական մեթոդաբանական սկզբունքներն ու որոշ հոդվածների վիճակագրության հավաքագրման վերաբերյալ ՀՀ-ում կիրառվող մոտեցումները: Նյութը պարունակում է ինչպես օգտակար տեղեկություն վճարային հաշվեկշիռն ու միջազգային ներդրումային դիրքն օգտագործողների, մասնավորապես դրամավարկային քաղաքականություն իրականացնողների ու այլ վերլուծաբանների համար, քանի որ հնարավորություն է տալիս ծանոթանալ օգտագործվող տվյալների հիմքում ընկած հաշվարկների, մեթոդաբանության հետ, ինչպես նաև ինքնուրույն դատողություններ անել այս կամ այն ցուցանիշի արժանահավատության վերաբերյալ: Սույն Ձեռնարկը մշակված է արտաքին հատվածի վիճակագրության միջազգային ստանդարտներին համապատասխան, որոնց հիմնական աղբյուրը ԱՄՀ «Վճարային հաշվեկշռի և միջազգային ներդրումային դիրքի ձեռնարկն» է (այսուհետ՝ ԱՄՀ Ձեռնարկ), ներկայումս դրա 6-րդ հրատարակությունը: Սույն Ձեռնարկում օգտագործվող եզրույթներն ունեն վիճակագրական իմաստ:

2. Հայաստանի Հանրապետության վճարային հաշվեկշիռը կազմվում և հրապարակվում է սկսած 1993 թվականից, իսկ միջազգային ներդրումային դիրքը և արտաքին պարտքը՝ 1999 թվականից: Մինչև 1996 թվականը վճարային հաշվեկշիռը ներկայացվում էր ամփոփ տարբերակով, իսկ 1996 թվականից հետո՝ Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից առաջարկված ընդլայնված տարբերակով: Արտաքին հաշիվները մինչև 2011 թվականը կազմվում էին Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից մշակված Վճարային հաշվեկշռի կազմման ձեռնարկի 5-րդ խմբագրության համաձայն, իսկ ներկայումս ինչպես վճարային հաշվեկշռի, այնպես էլ միջազգային ներդրումային դիրքի տվյալների հավաքագրման համար մեթոդական ուղեցույց է ԱՄՀ Ձեռնարկը և «Արտաքին պարտքի վիճակագրություն. ուղեցույց վիճակագրություն կազմողների և օգտագործողների համար»: Անցումը վիճակագրության կազմման նոր մեթոդաբանությանը տեղի է ունեցել 2011 թվականից: 2014 թվականին վերանայվել են արտաքին հաշիվների պատմական շարքերը: ՀՀ-ում օգտագործվող մեթոդաբանության թարմացումը կրում է շարունակական բնույթ՝ ԱՄՀ-ի կողմից Ձեռնարկի թարմացմանը զուգահեռ: Վճարային հաշվեկշիռը, միջազգային ներդրումային դիրքը և արտաքին պարտքը կազմվում և հրապարակվում են եռամսյակային կտրվածքով՝ ԱՄՆ դոլարով՝ հաշվետու եռամսյակի ավարտին հաջորդող եռամսյակի վերջին աշխատանքային օրը: Մինչև 2011 թվականը նշված հաշվետվությունները

կազմվել են ՀՀ վիճակագրական կոմիտեի (այսուհետ՝ Արմստատ, նախկինում՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն) կողմից, իսկ սկսած 2011 թվականից՝ ՀՀ ԿԲ վիճակագրության վարչության արտաքին հատվածի վիճակագրության բաժնի կողմից՝ «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի համաձայն:

3. Հայաստանի վճարային հաշվեկշռի և միջազգային ներդրումային դիրքի կազմման նպատակով ՀՀ ԿԲ-ն տեղեկություն է հավաքագրում ֆինանսական համակարգի սուբյեկտներից, Արմստատից, ՀՀ ֆինանսների նախարարությունից և այլ գերատեսչություններից, ինչպես նաև առանձին հոդվածների գծով անհրաժեշտ տեղեկությունը ստանում է պարբերաբար կատարվող ընտրանքային հետազոտությունների ու հարցումների, համացանցում հրապարակված տվյալների հավաքագրման և փորձագիտական գնահատումների միջոցով: Արմստատն իր հերթին արտաքին առևտրի վերաբերյալ տեղեկությունները ստանում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից, այլ գերատեսչություններից, ինչպես նաև արտաքին գործառնությունների վերաբերյալ վիճակագրական հաշվետվություններ է հավաքում մասնավոր ոչ ֆինանսական հատվածի տնտեսավարող սուբյեկտներից: «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը վիճակագրական տվյալների հավաքման գործընթացներն իրականացնում է «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի և դրա հիման վրա ընդունված այլ իրավական ակտերի համաձայն:

Գլուխ 2. Վճարային հաշվեկշիռն ու դրա կազմման հիմնական սկզբունքները

4. Վճարային հաշվեկշիռը վիճակագրական հաշվետվություն է, որտեղ համակարգված տեսքով արտացոլվում են ժամանակի որոշակի հատվածում (սովորաբար եռամսյակում կամ մեկ տարում) տվյալ երկրի արտաքին տնտեսական գործառնությունների վերաբերյալ ամփոփ տվյալներ:

5. Վճարային հաշվեկշռի կազմման առաջին և կարևորագույն սկզբունքը *վիճակագրական ռեզիդենտության սկզբունքն է*, քանի որ կախված այն հանգամանքից, թե ինչպես է սահմանվում ռեզիդենտությունը, որոշվում է նաև գործառնությունները վճարային հաշվեկշռում ներառելու կամ չներառելու խնդիրը: Վիճակագրության կազմման տեսանկյունից ինստիտուցիոնալ միավորը համարվում է տվյալ տնտեսական տարածքի ռեզիդենտ, եթե դրա գերակա շահերի կենտրոնը որոշակի ժամանակով գտնվում է այդ երկրի տնտեսական տարածքում: Միջազգային

վիճակագրական ուղեցույցներում ընդունված է այդ ժամանակահատվածը համարել 1 տարի և ավել, ինչը նախատեսված է միջազգային համադրելիության ապահովման համար: Ընդ որում, տվյալ երկրում գերակա շահեր ունենալը նշանակում է, որ տվյալ երկրի տնտեսական տարածքում գոյություն ունի որոշակի տեղավորման վայր, կացարան, արտադրության կազմակերպման համար նախատեսված շենք, շինություն կամ այլ տարածք, որտեղ կամ որտեղից տնտեսվարող սուբյեկտն իրականացնում է և հետագայում էլ մտադրություն ունի իրականացնել նշանակալի ծավալի տնտեսական գործունեություն և գործառնություններ այլ սուբյեկտների հետ՝ անորոշ ժամանակով կամ որոշակի երկար ժամանակահատվածում (միջազգայնորեն ընդունված է 1 տարի կամ ավելի ժամկետ): ՀՀ տարածքում տնտեսական գործունեություն իրականացնող բոլոր ինստիտուցիոնալ միավորները վիճակագրական առումով համարվում են ՀՀ ռեզիդենտ միավորներ: Տնային տնտեսությունը համարվում է որևէ երկրի ռեզիդենտ, եթե այդ երկրի տնտեսական տարածքում տնային տնտեսության անդամներն ունեն կամ մտադիր են ունենալ բնակության վայր, որը տնային տնտեսության անդամների հիմնական բնակության վայրն է:

6. Վճարային հաշվեկշռի կազմման մյուս կարևոր սկզբունքը *կրկնակի գրանցման սկզբունքն է*, ըստ որի՝ հաշվեկշռի ցանկացած գործառնություն արտացոլվում է երկու անգամ՝ մեկը նշվում է որպես կրեդիտ, մյուսը՝ դեբետ: Բոլոր կրեդիտային գործառնությունների գումարը պետք է հավասար լինի դեբետային գործառնությունների գումարին:

Աղյուսակ 1. Վճարային հաշվեկշռում գործառնությունների գրանցման սխեման

Ընթացիկ և կապիտալ հաշիվներում գործառնությունների գրանցումները

Գործառնություններ	***Կրեդիտ***	***Դեբետ***
Ապրանքներ և ծառայություններ	Արտահանում	Ներմուծում
Սկզբնական եկամուտ	Ստացված միջոցներ	Վճարված միջոցներ
Երկրորդային եկամուտ	Ստացված միջոցներ	Տրված միջոցներ
Կապիտալի հաշիվ	Միջոցների ստացում	Միջոցների տրամադրում
Զուտ վարկավորում (+)/ զուտ փոխառություն (-) ընթացիկ և կապիտալ հաշիվներից (կրեդիտների հանրագումարից հանած դեբետների հանրագումար)		

Ֆինանսական հաշվում գործառնությունների գրանցումները

<table>
<tr><td rowspan="4">Ֆինանսական հաշիվ</td><td>Արտաքին ֆինանսական ակտիվների աճ</td><td>Արտաքին ֆինանսական ակտիվների նվազում</td></tr>
<tr><td colspan="2">Ֆինանսական ակտիվների զուտ ձեռքբերում</td></tr>
<tr><td>Արտաքին ֆինանսական պարտավորությունների աճ</td><td>Արտաքին ֆինանսական պարտավորությունների նվազում</td></tr>
<tr><td colspan="2">Ֆինանսական պարտավորությունների զուտ ստանձնում</td></tr>
<tr><td colspan="3">Զուտ վարկավորում (+) զուտ փոխառություն (-) ֆինանսական հաշվից (ֆինանսական ակտիվների զուտ ձեռքբերումից հանած ֆինանսական պարտավորությունների զուտ ստանձնում)</td></tr>
</table>

7. Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հետ գործառնություններն արտացոլելու համար օգտագործվում են «ակտիվների զուտ ձեռքբերում» և «պարտավորությունների զուտ ստանձնում» տերմինները: Ֆինանսական հաշվի հոդվածները գրանցվում են զուտ հիմքով յուրաքանչյուր ակտիվի և պարտավորության մասով, այսինքն՝ հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում յուրաքանչյուր գործիքի գծով բոլոր ավելացումներից նվազեցվում են մարումները: Այսպիսով՝ դրական զուտ փոփոխությունը նշանակում է ակտիվների կամ պարտավորությունների աճ, իսկ բացասականը՝ ակտիվների կամ պարտավորությունների նվազում: Յուրաքանչյուր հոդվածի գծով այնուհետև հաշվարկվում է զուտ մեծությունը՝ ակտիվների զուտ ձեռքբերումից նվազեցվում է պարտավորությունների զուտ ստանձնումը: Արդյունքում հաշվարկվում է «Զուտ վարկավորում (+)/ զուտ փոխառություն (-) ֆինանսական հաշվից» (բոլոր հաշիվների հանրագումարը): Վերջինս պետք է հավասար լինի «Զուտ վարկավորում (+)/ զուտ փոխառություն (-) ընթացիկ և կապիտալ հաշիվներից» հոդվածին (ընթացիկ և կապիտալ հաշիվների գումարին), այսինքն՝ ընդհանուր հաշվեկշիռը պետք է հավասար լինի զրոյի: Սակայն պրակտիկայում հաշիվների գումարը զրոյի հավասար չի լինում, ինչի պատճառն այն է, որ հավաքագրվող տվյալները ստացվում են տարբեր աղբյուրներից, կարող են լինել միևնույն գործարքի գրանցման ժամանակային տարբերություններ, հնարավոր են տեղեկատվության ճշգրտության և ամբողջականության հետ կապված խնդիրներ, ինչպես նաև որոշ հոդվածներում առկա են գնահատականներ: Նշված տարբերությունները արտացոլվում են «Սխալներ և բացթողումներ» հոդվածում:

8. Վճարային հաշվեկշռում գործառնությունների գրանցման պահը որոշվում է ***հաշվեգրման սկզբունքի*** հիման վրա: Այսինքն՝ գործառնությունները գրանցվում են այն պահին, երբ տնտեսական արժեքները ստեղծվում, փոխանակվում, փոխանցվում կամ իրացվում են՝ անկախ դրանց դիմաց գումար ստացված կամ վճարված լինելու փաստից: Վճարային հաշվեկշռում արտացոլվող գործառնությունները պետք է գրանցվեն փաստացի շուկայական արժեքով:

Գլուխ 3. Վճարային հաշվեկշռի կառուցվածքը

9. Վճարային հաշվեկշիռը կազմված է երեք հիմնական հաշիվներից՝

1. ընթացիկ հաշիվ,
2. կապիտալի հաշիվ,
3. ֆինանսական հաշիվ:

3.1. ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇԻՎ

10. Ընթացիկ հաշիվն ընդգրկում է ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների միջև ապրանքների, ծառայությունների, սկզբնական և երկրորդային եկամուտների հոսքերը: Ընթացիկ հաշվի հաշվեկշիռը ցույց է տալիս արտահանման ու ստացվող եկամուտների և ներմուծման ու վճարվող եկամուտների տարբերությունը:

3.1.1.Ապրանքներ

11. *Ապրանքներ* հոդվածում ընդգրկվում են՝

1. ապրանքների առևտուրն ըստ վճարային հաշվեկշռի հիմքի,
2. ապրանքների վերավաճառքի գծով զուտ արտահանում,
3. ոչ մոնետար ոսկի:

12. *Ապրանքների առևտուրն ըստ վճարային հաշվեկշռի հիմքի* հոդվածն ընդգրկում է այն ապրանքները, որոնց նկատմամբ տեղի է ունեցել սեփականության իրավունքի փոխանցում ռեզիդենտի և ոչ ռեզիդենտի միջև, և որոնք չեն ներառվում վերավաճառքի համար նախատեսված ապրանքների, ոչ մոնետար ոսկու, ինչպես նաև այն ապրանքների կազմում, որոնք բացառության կարգով ընդգրկվում են ճանապարհորդության, շինարարության և պետական ապրանքների ու ծառայությունների հոդվածներում:

1. *Ապրանքների առևտրի* հոդվածում ներառվում են նաև տրանսպորտային կայաններում ձեռք բերված ապրանքները (վառելիք, սնունդ), ապրանքների տեսքով ստացված մարդասիրական օգնությունը, տարատեսակ նվերները, վերաարտահանումը, ինչպես նաև այն ապրանքները, որոնք ձեռք են բերվում վերամշակման համար, առանց սեփականատիրոջ երկրի սահմանը հատելու և վերամշակումից հետո վաճառվում են և այլն:
2. Վերաարտահանումն այն արտասահմանյան ապրանքների արտահանումն է երկրից, որոնք նախկինում ներմուծվել են ազատ շրջանառության նպատակով և, այնուհետև, առանց նշանակալի փոփոխությունների ենթարկվելու, արտահանվել են: Այն դեպքում, երբ ներմուծված ապրանքները ենթարկվում են նշանակալի փոփոխության (վերամշակում, վերջնական հավաքում, ջարդոն, թափոն և այլն), և փոխվում է ապրանքային ծածկագիրը, ապա համարվում է, որ երկրի ներսում արտադրվել է արտահանման համար նոր ապրանք, այլ ոչ թե վերաարտահանում է տեղի ունեցել:
3. *Ապրանքների առևտուրն ըստ վճարային հաշվեկշռի հիմքի* հոդվածի մեջ չեն ներառվում տարանցիկ ապրանքները, ռազմական բազաների և դեսպանատների համար տեղափոխվող ապրանքները, ժամանակավորապես ներմուծված կամ արտահանված ապրանքները, որոնց մասով չի եղել սեփականության իրավունքի փոխանցում (օրինակ՝ ցուցահանդեսների համար տեղափոխվող ապրանքները, գործառնական լիզինգի հիմքում ընկած ապրանքները), վերամշակման, փաթեթավորման, պիտակավորման համար ներմուծված ապրանքները, որոնք չեն պատկանում տվյալ ծառայությունները մատուցող ընկերությանը (մանրամասն տես *Այլ կողմերին պատկանող նյութական ռեսուրսների վերամշակման ծառայություններ* հոդվածի բացատրություններում) և այլն:

13. *Վերավաճառքի գծով զուտ արտահանում (կրեդիտ)* հոդվածում արտացոլվում են արտերկրներում ռեզիդենտների կողմից վերավաճառքի նպատակով գնված ապրանքները, որոնք չեն հատել հաշվետու երկրի (ապրանքների սեփականատիրոջ երկրի) սահմանը: Վերավաճառքի հոդվածում առանձնացվում է *Ապրանքներ ձեռք բերված (բացասական կրեդիտ)* հոդվածը, երբ հաշվետու երկրի ռեզիդենտը արտերկրում ձեռք է բերում ապրանքներ վաճառքի համար և *Ապրանքներ վաճառված (կրեդիտ)* հոդվածը, այս դեպքում ռեզիդենտը ձեռք բերված ապրանքները վաճառում է այլ երկրների ռեզիդենտների՝ առանց հաշվետու երկրի տնտեսական տարածք մուտք գործելու: Երկու հոդվածների տարբերությունը ապրանքների վերավաճառքի գծով զուտ արտահանումն է (կրեդիտ), որը կարող է ունենալ նաև բացասական մեծություն, եթե հաշվետու

ժամանակաշրջանում ռեզիդենտի մոտ ավելացել են նյութական պաշարները, կամ նա կրել է վերավաճառքի գծով վնասներ:

14. *Ոչ մոնետար ոսկի* հոդվածը ներառում է ցանկացած ոսկու արտահանում ու ներմուծում (բացառությամբ ոսկերչական իրերի, ոսկյա ժամացույցների և ոսկի պարունակող այլ ապրանքների), որը չի հանդիսանում դրամավարկային կարգավորման մարմինների պահուստային ակտիվ (մոնետար ոսկի): Այն ներառում է ինչպես կուտակման միջոց հանդիսացող, այնպես էլ արդյունաբերական նշանակություն ունեցող ոսկին:

15. Չնայած *ապրանքներ* հոդվածն ընդգրկում է գրեթե բոլոր ապրանքները, որոնց սեփականության իրավունքն անցնում է ռեզիդենտից ոչ ռեզիդենտին ու հակառակը, այնուհանդերձ, կան որոշակի բացառություններ: Օրինակ՝ որոշ ապրանքներ ընդգրկվում են *ծառայություններ* հոդվածում այն պատճառով, որ դրանց մասին առկա տվյալներից հնարավոր չէ տարանջատել ծառայությունները ապրանքներից: Նման ապրանքների օրինակներ են.

1. ապրանքներ, որոնք ձեռք են բերվել զբոսաշրջիկների կողմից անձնական օգտագործման համար կամ ոչ ռեզիդենտ աշխատողների և ծառայողների կողմից (ճանապարհորդություններ) և այլն,
2. թերթեր և պարբերական հրապարակումներ (բացառությամբ մեծածախ առաքումները), որոնք առաքվում են ուղղակի բաժանորդներին և այլն,
3. այլ երկրներում շինարարություն իրականացնելու համար ռեզիդենտ կազմակերպության պահեստից առաքված ապրանքները շինարարական օբյեկտում օգտագործելու նպատակով, եթե տվյալ շինարարական նախագիծը երկարաժամկետ բնույթ չի կրում (մեկ տարուց ավել): Հակառակ դեպքում, շինարարության իրականացման երկրում ձևավորվում է ռեզիդենտ կազմակերպության ենթամիավոր, և առաջ են գալիս ուղղակի ներդրումային հարաբերություններ:

16. Ապրանքների առևտրի վիճակագրության վարողը և առաջնային հրապարակողը Արմստատն է: Սկսած 2011 թվականից՝ Արմստատն արտաքին առևտրի ամփոփ տվյալները տրամադրում է ՀՀ ԿԲ-ին՝ վճարային հաշվեկշռի մեջ ներառելու նպատակով: Ընդ որում, բացի ամփոփ տվյալներից, ապրանքների վերաբերյալ տեղեկությունների ներկայացումը կատարվում է նաև ԵԱՏՄ ԱՏԳԱԱ տասանիշ դասակարգմամբ[1], ինչը հիմնված է միջազգային պրակտիկայում կիրառվող Ներդաշնակեցված համակարգի (HS) վրա:

[1] Արտահանված և ներմուծված ապրանքների տասանիշ կոդավորումը հիմնված է ԵԱՏՄ երկրների Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացուցակի վրա, ինչը հնարավորություն է տալիս առավել մանրամասն տեղեկատվություն ունենալ արտահանված և ներմուծված ապրանքների ծավալների և գների

17. Հայաստանի՝ ԵԱՏՄ-ին անդամակցելուց հետո անդամ երկրների միջև առևտուրը գրանցվում է ոչ թե հայտարարատուի կողմից ապրանքների հայտարարագրի միջոցով, այլ գործարքն իրականացնող տնտեսավարող սուբյեկտները և անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձինք ՀՀ կառավարության կողմից հաստատված հատուկ հաշվետվության միջոցով տեղեկությունը ներկայացնում են մաքսային մարմիններին:

18. Մաքսային մարմիններից ստացված տվյալները Արմստատում ենթարկվում են որոշակի մշակումների՝ դրանք վճարային հաշվեկշռի մեթոդաբանությամբ պահանջվող տեսքով ներկայացնելու նպատակով: Մասնավորապես, մաքսային հայտարարագրերում արտահանումը գնահատված է ՖՕԲ[2], իսկ ներմուծումը՝ ՍԻՖ[3] գներով: Սակայն վճարային հաշվեկշռի մեթոդաբանությունը պահանջում է, որ ներմուծումը նույնպես գնահատվի ՖՕԲ գներով: Ներմուծման՝ ՍԻՖ-ից ՖՕԲ-ի անցման համար գնահատումը կատարվում է ապրանքների ապահովագրության և բեռնափոխադրման հետ կապված ծախսերի մասնաբաժինները հանելով և դրանք ծառայությունների համապատասխան հոդվածներում ներառելու ճանապարհով: Կիրառվող մասնաբաժինների վերաբերյալ գնահատականները պարբերաբար պետք է ենթարկվեն վերանայումների՝ ներմուծող ընկերությունների շրջանում հարցումների իրականացման, ինչպես նաև մաքսային վիճակագրության շրջանակներում առկա տվյալներով ստացվող գնահատականների հիման վրա:

3.1.2. Ծառայություններ

19. Համաձայն ԱՄՀ Ձեռնարկի՝ *ծառայություններ* հոդվածում ընդգրկվում են.

1. այլ կողմերին պատկանող նյութական ռեսուրսների վերամշակման ծառայություններ,
2. տեխնիկական սպասարկման և վերանորոգման ծառայություններ,
3. տրանսպորտային ծառայություններ (ծովային, օդային, ավտոտրանսպորտային, փոստային և սուրհանդակային, այլ),
4. ճանապարհորդություն (գործնական և անձնական),
5. շինարարություն,

փոփոխությունների վերաբերյալ: Այս կոդավորման միջոցով ապրանքները կարող են ներկայացվել նաև ըստ ենթախմբերի, խմբերի և բաժինների:

[2] FOB (Free on Board)- ապրանքների գնահատման այս սկզբունքում գնահատված արժեքը ներառում է ապրանքների արժեքը և դրանց փոխադրման ու օժանդակ ծառայությունների համար ծախսերը մինչև արտահանող երկրի սահման:

[3] CIF (Cost, Insurance and Freight): Գնահատման այս սկզբունքը, ի տարբերություն FOB-ի, իրենից ներկայացնում է ապրանքների գնահատում ներմուծող երկրի մաքսային սահմանում և ներառում է նաև արտահանող և ներմուծող երկրների մասքային սահմանների միջև ապրանքների ապահովագրության և բեռնափոխադրման ծախսերը:

6. ապահովագրություն և կենսաթոշակային ծառայություններ,
7. ֆինանսական ծառայություններ,
8. հեռահաղորդակցության, համակարգչային և տեղեկատվական ծառայություններ,
9. ծախսեր մտավոր սեփականության օգտագործման դիմաց,
10. այլ գործնական ծառայություններ,
11. անձնական, մշակութային և զվարճանքի ծառայություններ,
12. պետական ապրանքներ և ծառայություններ:

20. *Այլ կողմերին պատկանող նյութական ռեսուրսների վերամշակման ծառայություններ* հոդվածին վերաբերում են արտահանված կամ ներմուծված այն ապրանքները, որոնք մաքսային հսկողության ներքո ենթարկվում են վերամշակման և այդ ընթացքում չեն փոխում սեփականատիրոջը: Մասնավորապես, պատվիրատուի հումք հանդիսացող ալմաստը, կտորեղենը, նավթը, հանքաքարը և այլ ապրանքներն անցնում են համապատասխան վերամշակման փուլ և վերադարձվում են պատվիրատուին: Այն դեպքում, երբ պատվիրատուի հումքը ներմուծվում է վերամշակման համար՝ հետագայում վերադարձման պայմանով, այն գրանցվում է ծառայությունների ծավալում, ընդ որում, զուտ հիմքով (մշակման արժեքով): Ապրանքների արտաքին առևտրի վիճակագրության վարման ժամանակ վերամշակման նպատակով առաքված ապրանքները, արտահանման և ներմուծման ծավալներում գրանցվում են համախառն հիմքով:

21. *Տեխնիկական սպասարկման և վերանորոգման ծառայություններ* հոդվածը ներառում է շարժական միջոցների (օրինակ՝ նավեր, ինքնաթիռներ և այլ տրանսպորտային միջոցներ) վերանորոգման համար ստացված կամ վճարված միջոցները՝ ներառյալ վերանորոգող կազմակերպության կողմից օգտագործվող պահեստամասերի արժեքը (այն պահեստամասերի արժեքը, որոնց համար վճարումը կատարվում է առանձին, պետք է ներառվեն ապրանքների արտահանման և ներմուծման ծավալներում): Տեխնիկական սպասարկման և վերանորոգման ծառայությունները գրանցվում են զուտ հիմքով, այսինքն՝ միայն վերանորոգման արժեքը, այլ ոչ թե վերանորոգման ենթակա միջոցների արժեքը վերանորոգումից առաջ և հետո: Այս հոդվածի ցուցանիշները ստացվում են հիմնականում հաշվարկային եղանակով՝ հիմք ընդունելով բեռնամաքսային հայտարարագրերով *ապրանքներ վերամշակման համար* ռեժիմով առաքված որոշ ապրանքների արժեքը (որոնք ենթադրում են վերանորոգում) և փորձագիտական գնահատականներ՝ տրանսպորտային միջոցների վերանորոգումների մասով:

22. Տրանսպորտային ծառայություններին են վերաբերում բոլոր տեսակի տրանսպորտային սպասարկումները (ծովային, օդային, ավտոտրանսպորտային և այլ տեսակի տրանսպորտային միջոցներով՝ ներառյալ ցամաքով, ներքին ջրերով և խողովակաշարով

փոխադրումները), որոնք իրականացվում են մի երկրի ռեզիդենտի կողմից մեկ այլ երկրի ռեզիդենտի համար: Նման ծառայությունները տարանջատվում են.

1. ուղևորափոխադրումների,
2. բեռնափոխադրումների,
3. այլի (վերը նշված փոխադրումների հետ կապված հարակից կամ օժանդակ ծառայությունները):

23. Ուղևորափոխադրումները ներառում են բոլոր տեսակի սպասարկումները ոչ ռեզիդենտների միջազգային փոխադրումների ոլորտում՝ փոխադրումներ, որոնք իրականացվում են ռեզիդենտ տրանսպորտային կազմակերպությունների կողմից (կրեդիտ) և փոխադրումներ, որոնք իրականացվում են ոչ ռեզիդենտ տրանսպորտային կազմակերպությունների կողմից (դեբետ): Այստեղ նաև ընդգրկվում են ոչ ռեզիդենտ տրանսպորտային կազմակերպությունների կողմից տվյալ երկրի տնտեսական տարածքում իրականացվող ուղևորափոխադրումները: Ուղևորափոխադրումների ծավալի մեջ ներառվում են նաև ուղեբեռի անվճար փոխադրման հաստատված սահմանաչափի գերազանցման համար կատարվող վճարները, ինչպես նաև ուղևորների կողմից փոխադրողի տրանսպորտային միջոցում գնված ապրանքների արժեքը: Այստեղ ներառվում են նաև ծովային և օդային նավերի, զբոսաշրջային ավտոբուսների երկարաժամկետ անձնակազմով վարձակալությունը ուղևորափոխադրումներ իրականացնելու համար:

24. Բեռնափոխադրումները ներառում են բոլոր տեսակի բեռների փոխադրումները: Բեռնափոխադրումների գնահատումը կատարվում է հետևյալ սկզբունքով՝

1) ապրանքների գները պետք է չափվեն արտահանող երկրի մաքսային սահմանում ՖՕԲ գներով (որը ներառում է նաև բեռնման, բեռնաթափման, փաթեթավորման ծախսերը մինչև արտահանող երկրի սահման),

2) ենթադրվում է, որ արտահանող երկրի սահմանից մինչև ներմուծող երկրի սահմանը բեռնափոխադրման համար վճարում է ներմուծողը:

25. Տրանսպորտային ծառայություններն ընդհանրապես ընդգրկում են ապրանքների փոխադրումը մինչև ներմուծող երկրի մաքսային սահման և հետագա տեղափոխումը նշանակության վայր, որը գտնվում է տվյալ ներմուծող երկրում: Նման տրանսպորտային ծառայությունները դիտարկվում են որպես ներմուծող երկրի ռեզիդենտներին տրանսպորտային ծառայությունների մատուցում, որն իրականացվում է արտահանող երկրի ռեզիդենտների կամ երրորդ երկրի ռեզիդենտների կողմից: Այսպիսով՝ ցանկացած տրանսպորտային ծառայություն, որը կապված է տվյալ երկիր ապրանքների ներմուծման հետ (իրականացվում է այն ներմուծող երկրի

թե՛ տարածքում, թե՛ սահմաններից դուրս) և իրականացվում է ոչ ռեզիդենտների կողմից՝ արտահանող երկրում ապրանքը բեռնելուց հետո, տվյալ երկրի վճարային հաշվեկշռում գրանցվում է որպես ծառայությունների ներմուծում, իսկ ծառայություններ մատուցող երկրի վճարային հաշվեկշռում՝ որպես ծառայությունների արտահանում:

26. Բեռնափոխադրումների մեջ ներառվում են նաև սահմանափակ ժամանակահատվածով բեռնափոխադրման նպատակով անձնակազմի հետ տրանսպորտային միջոցների վարձակալությունը: Այս կատեգորիան չի ընդգրկում ֆինանսական լիզինգը (որը ներառվում է ֆինանսական հաշվում, քանի որ համարվում է ֆինանսական ներդրում):

27. *Այլ (հարակից և օժանդակ) ծառայություններ* հոդվածին են վերաբերում օդանավակայաններում, նավահանգիստներում և այլ կայաններում մատուցվող ծառայությունները, հատկապես բեռնման-բեռնաթափման աշխատանքները, պահպանումն ու պահեստավորումը, փաթեթավորումը, նավերի, ինքնաթիռների ուղեկցումը, տրանսպորտային միջոցների շահագործումն ու մաքրումը, փրկարարական աշխատանքները:

28. Այս հոդվածին են առնչվում նաև փոստային և սուրհանդակային կապի ծառայությունները: Փոստային ծառայությունը ներառում է նամակների, թերթերի, ամսագրերի և այլ տպագրական նյութերի, ինչպես նաև ծանրոցների առաքման դիմաց կատարված վճարները: Սուրհանդակային ծառայությունը ներառում է էքսպրես առաքումների և անմիջապես տուն առաքման դիմաց կատարվող վճարները:

29. Ճանապարհորդությունը, որպես վճարային հաշվեկշռի տարր, ի տարբերություն մյուս ծառայությունների, կոնկրետ ծառայության ձև չէ, այլ ծառայությունների համալիր, որոնք մատուցվում են գործնական կամ անձնական նպատակներով ճամփորդողներին: *Ճանապարհորդություն* հոդվածը հիմնականում ընդգրկում է այն ապրանքներն ու ծառայությունները, որոնք ձեռք են բերվել բոլոր տեսակի այցելուների կողմից: Այցելուներ չեն համարվում այն անձինք, որոնք ծառայում են արտասահմանում տեղակայված իրենց երկրի ռազմաբազաներում կամ ներկայացնում են իրենց երկրի շահերը արտասահմանում (դիվանագիտական անձնակազմ) և նրանց ուղեկցող անձինք (նրանց կողմից ձեռք բերված ապրանքներն ու ծառայությունները գրանցվում են *պետական ծառայություններ* հոդվածում): Այն անձինք, որոնք անմիջականորեն մասնակցում են ընդունող երկրի ռեզիդենտ տնտեսական միավորի արտադրական գործունեությանը (սեզոնային աշխատողները, սահմանամերձ գոտիներում աշխատող անձինք և այլք) թեև այցելու չեն, այնուամենայնիվ, նրանց կողմից ձեռք բերված ապրանքներն ու ծառայությունները գրանցվում են *ճանապարհորդություն* հոդվածում, իսկ ստացված համախառն եկամուտը՝ *սկզբնական եկամուտներ* հոդվածում: «Ճանապարհորդություն»

տերմինն ավելի լայն հասկացություն է, քան զբոսաշրջությունը, քանզի այն ներառում է նաև աշխատանքի նպատակով մինչև մեկ տարի ժամկետով մեկնողներին և ժամանողներին:

30. Նշված կատեգորիայում չեն ընդգրկվում ճանապարհորդների միջազգային տրանսպորտային փոխադրումները (ճանապարհածախս), որոնք ներառվում են *տրանսպորտային ծառայությունների ուղևորափոխադրումներ* հոդվածում, այնինչ մի քանի երկրներով իրականացվող շրջագայության ամբողջ ծախսերը (կրուիզ) ներառվում են *Ճանապարհորդություն* հոդվածում: Այսպիսով՝ որպես ճանապարհորդության չափանիշ ընդունվում է ուղևորության մեկ տարուց պակաս տևողությունը, սակայն այս սկզբունքը չի տարածվում ուսանողների և երկարաժամկետ բուժվող հիվանդների վրա, որոնք շարունակում են մնալ իրենց երկրի ռեզիդենտ նույնիսկ այն դեպքում, երբ գտնվում են այլ երկրի տարածքում մեկ տարուց ավել, և նրանց սպառած ապրանքներն ու ծառայությունները գրանցվում են *Ճանապարհորդություն* հոդվածում:

31. Վճարային հաշվեկշռում *Ճանապարհորդություն* հոդվածը բաժանվում է երկու հիմնական բաղադրիչների՝ գործնական և անձնական:

32. Գործնական ճանապարհորդությունները ներառում են անձնական օգտագործման նպատակով ձեռք բերված ապրանքներն ու ծառայությունները որոշակի խումբ անձանց (այդ թվում՝ սեզոնային աշխատողների) կողմից, որոնց ճանապարհորդության նպատակը տնտեսական ակտիվությունն է, մասնավորապես պետական ծառայողների, միջազգային կազմակերպությունների աշխատողների պաշտոնական ճանապարհորդությունների հետ կապված ծախսերը, գործատուի կողմից վճարվող կամ սեզոնային և սահմանային աշխատողների ծախսերը ճանապարհորդության ընթացքում և նմանատիպ այլ ծախսեր:

33. *Անձնական ճանապարհորդություններ* հոդվածին են վերաբերում այն գործառնությունները, որոնք կապված են առողջության վերականգնման, ուսման կամ այլ ոչ գործնական նպատակների հետ (հանգստի կազմակերպում, հարազատներին այցելություն, գնումներ, ուխտագնացություն և այլն): Սակայն այն ծառայությունները, որոնք առողջապահական կազմակերպությունները կամ կրթական հաստատությունները մատուցում են ոչ ռեզիդենտներին նրանց երկրի տարածքում, ներառվում են *անձնական, մշակութային և զվարճանքի ծառայություններ* հոդվածում:

34. Հեռահաղորդակցության, համակարգչային և տեղեկատվական ծառայությունները անհրաժեշտ է տարանջատել՝

1. հեռահաղորդակցության,
2. համակարգչային,
3. տեղեկատվական:

35. Հեռահաղորդակցության ծառայությունները ներառում են ձայնի, պատկերի, տվյալների կամ այլ տեղեկատվության տեղափոխումը կամ հեռարձակումը հեռախոսի, հեռագրի, ռադիոյի կամ հեռուստատեսային ալիքներով, էլեկտրոնային փոստով կամ տելեֆաքսի և այլ կապի միջոցներով: Այս հոդվածի մեջ չեն ներառվում կապի ցանցի սարքավորումների տեղադրման ծառայությունները (համարվում է շինարարություն):

36. Համակարգչային ծառայությունները ներառում են տվյալների մշակման, պատվերով համակարգչային ծրագրերի մշակման, ոչ անհատական պատվերով մշակված ծրագրային փաթեթներից օգտվելու համար արտոնագրային վճարները, համակարգչային տեխնիկական միջոցների վերանորոգումը և այլ նմանատիպ ծառայություններ:

37. Տեղեկատվական ծառայությունները ներառում են տեղեկատվական գործակալությունների ծառայությունները, ինչպես ՋԼՄ-ի նորությունների, նկարների ու հոդվածների տրամադրում, այնպես էլ տվյալների բազաների ստեղծման, տարածման ու պահպանման ծառայություններ: Այստեղ ներառվում են նաև թերթերի և ամսագրերի ուղիղ անհատական բաժանորդագրությունը փոստային կամ այլ եղանակով առաքման միջոցով:

38. Ֆինանսական ծառայությունները ներառում են ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների միջև իրականացվող ֆինանսական միջնորդությունը և այլ ծառայությունները (բացի ապահովագրական ընկերությունների և կենսաթոշակային հիմնադրամների ծառայություններից): Ֆինանսական ծառայությունները բաժանվում են *բացահայտ կերպով գանձվող և անուղղակիորեն չափվող ֆինանսական միջնորդության* ծառայությունների (ԱՉՖՄԾ): Վերջինս առաջանում է ավանդների և վարկերի դիմաց վճարվող տոկոսադրույքի և հաշվարկային տոկոսադրույքի միջև տարբերությունների հաշվին: Բացահայտ կերպով գանձվող ֆինանսական ծառայությունները ներառում են կոմիսիոն վճարներ և այլ ծառայության վճարներ, որոնք կապված են արժեթղթերի, ակտիվների կառավարման, ֆինանսական շուկայի կարգավորման և այլ գործառնությունների հետ:

39. Ֆինանսական ծառայությունների մեջ ներառվում են նաև ՀՀ ԿԲ պահուստների արտաքին կառավարման դիմաց ոչ ռեզիդենտներին վճարված գումարները, ինչպես նաև ՀՀ ԿԲ և կառավարության վարկային գծերի չօգտագործված մասի դիմաց գանձվող և վարկերի ստացմանն առնչվող վճարները (commitment fee, service charge):

40. Շինարարությունը ներառում է հիմնական միջոցների, ինժեներական կառույցների՝ ճանապարհների, կամուրջների կառուցումը, վերազինումը կամ վերանորոգումը: Շինարարության կազմում ներառվում են նաև այն ապրանքների և ծառայությունների արժեքը, որոնք ձեռք են բերվում շինարարության իրականացման երկրում, շինարարությունն իրականացնող կազմակերպության կողմից: Ընդ որում, վճարային հաշվեկշռի ծառայությունների *Շինարարություն*

հոդվածում արտացոլվում են այն շինարարական աշխատանքները, որոնք կատարվել են տվյալ երկրի համար ոչ ռեզիդենտ շինարարական ընկերությունների կողմից: Հարկ է նշել, որ եթե շինարարական ընկերությունը մեկ տարուց ավել աշխատում է տվյալ երկրի տարածքում, այն համարվում է տվյալ երկրի ռեզիդենտ, և նրա ծավալած աշխատանքները դասակարգվում են ոչ թե որպես շինարարական ծառայություններ, այլ ուղղակի ներդրումներ:

41. Ապահովագրական ծառայությունները չեն ներառվում ֆինանսական ծառայությունների մեջ և վճարային հաշվեկշռում արտացոլվում են որպես առանձին հոդված: Ապահովագրական ծառայությունները ներառում են հաշվետու երկրի (արտերկրի) ապահովագրական ընկերությունների կողմից ոչ ռեզիդենտներին (հաշվետու երկրի ռեզիդենտներին) մատուցված ապահովագրության տարբեր տեսակները: Այդպիսի ծառայությունների շարքին են դասվում բեռնափոխադրումների ապահովագրությունը, դժբախտ պատահարներից ապահովագրությունը, բժշկական ապահովագրությունը և այլն, ինչպես նաև վերաապահովագրությունը և օժանդակ ապահովագրական ծառայությունները:

42. Վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվում գրանցվող ՀՀ ապահովագրական ընկերությունների կողմից ոչ ռեզիդենտներին մատուցված ապահովագրական ծառայությունների ընդամենը արժեքը հաշվարկվում է հետևյալ կերպ. ընդամենը վաստակած ապահովագրավճարներ և ապահովագրական լրավճարների հանրագումար՝ հանած ընդամենը հատուցումներ և բազմապատկած ոչ ռեզիդենտներից ստացված վաստակած ապահովագրավճարների և ընդամենը վաստակած ապահովագրավճարների հարաբերությամբ (վերաապահովագրության դեպքում այս գումարից զտվում են նաև վճարվելիք միջնորդավճարները): Անհրաժեշտության դեպքում պետք է հաշվի առնել նաև ապահովագրավճարների և հատուցումների տատանողականության հաշվին ճշգրտումները: Ոչ ռեզիդենտ ապահովագրական ընկերությունների կողմից ՀՀ ռեզիդենտներին մատուցված ծառայությունների վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը ուղղակիորեն չի հաշվարկվում, այլ գնահատվում է: Նման գնահատական տրվում է միայն ներմուծված ապրանքների բեռնափոխադրման ապահովագրության մասով:

43. Կենսաթոշակային ծառայությունները նույնպես չեն ներառվում ֆինանսական ծառայությունների մեջ և իրենցից ներկայացնում են հաշվետու երկրի (արտերկրի) կենսաթոշակային ֆոնդերի կողմից ոչ ռեզիդենտներին (հաշվետու երկրի ռեզիդենտներին) մատուցած կենսաթոշակային ծառայությունները:

44. Այլ գործնական ծառայություններ՝

1. Անձնական, մշակութային և զվարճանքի ծառայությունների վերաբերյալ համապատասխան հաշվետվության միջոցով կազմակերպություններից տեղեկություն

է ստացվում կինոֆիլմերի և տեսաֆիլմերի արտադրության, դրանց տարածման, կինոֆիլմերի և տեսաֆիլմերի ցուցադրման, ռադիոհաղորդումների և հեռուստահաղորդումների ու ժամանցի կազմակերպման այլ ծառայությունների վերաբերյալ: Տվյալներ են ստացվում նաև ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունից:

2. *Պետական ապրանքներ և ծառայություններ (անկլավային տարածքների և այդ տարածքներում աշխատողների ու նրանց ընտանիքի անդամների կողմից ապրանքների ու ծառայությունների սպառում/գրամադրում) հոդվածի* վերաբերյալ տեղեկությունը գլխավորապես ստացվում է ԿԲ փորձագիտական գնահատականների և պետական համակարգի տարբեր կառույցներից ստացվող տեղեկատվության հիման վրա իրականացվող հաշվարկների միջոցով:

3.1.3 Սկզբնական եկամուտներ

45. Սկզբնական եկամուտները ռեզիդենտների կողմից արտադրական գործոնների (աշխատուժ, հող, իրական և ֆինանսական կապիտալ) դիմաց ոչ ռեզիդենտներից ստացված և ոչ ռեզիդենտներին վճարված եկամուտներն են:

46. Համաձայն ԱՄՀ Ձեռնարկի՝ *եկամուտներ հ*ոդվածը տարանջատվում է երեք հիմնական ենթախմբի՝

1. Աշխատողների վարձատրություն,
2. Ներդրումային եկամուտ,
3. Այլ սկզբնական եկամուտներ:

47. *Աշխատողների վարձատրություն* հոդվածը ներառում է սահմանային, սեզոնային և այլ կարճաժամկետ աշխատողների վարձատրությունը, որոնք ոչ ռեզիդենտ են հաշվետու երկրում, ինչպես նաև այն ռեզիդենտ աշխատողների վարձատրությունը, որոնց գործատուն ոչ ռեզիդենտ է: Աշխատողների վարձատրությունը վճարային հաշվեկշռում գրանցվում է համախառն սկզբունքով՝ ներառյալ հարկերը և նրանց կողմից արտերկրում կատարած բոլոր ծախսերը, այլ ոչ թե միայն փոխանցած կամ իրենց հետ բերված գումարները: Միևնույն ժամանակ, ինչպես արդեն նշվել է, վճարային հաշվեկշռում ներկայացվում են նաև դրամական փոխանցումների հետ կապված լրացուցիչ հոդվածներ, մասնավորապես սեզոնային աշխատողների ճանապարհորդությունների վրա կատարված ծախսերը, ներքին տրանսպորտային ծախսերը, որոնք գրանցվում են

ծառայություններում և սեզոնային աշխատողների կողմից վճարված եկամտահարկը, որը գրանցվում է *պետական հատվածի ընթացիկ տրանսֆերտներ* հոդվածում:

48. *Աշխատողների վարձատրություն* հոդվածի գործառնությունները գրանցվում են միայն այն դեպքում, երբ առկա են գործատու-աշխատող հարաբերություններ ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների միջև: Նման հարաբերությունների առկայությունը նշանակում է, որ առկա է ֆորմալ կամ ոչ ֆորմալ համաձայնություն կողմերի միջև, որտեղ նշվում է, որ տվյալ անհատն աշխատում է գործատուի մոտ որոշակի աշխատավարձի դիմաց: Եթե նման հարաբերություններ առկա չեն, ապա անհատները համարվում են ոչ թե աշխատողներ, այլ ինքնազբաղներ, որոնք մատուցում են ծառայություններ, և նրանց իրականացրած աշխատանքի դիմաց ստացված վճարներն արտացոլվում են ծառայությունների համապատասխան հոդվածներում:

49. Ներդրումներից եկամուտներն արտաքին ակտիվների և պարտավորությունների դիմաց եկամուտների ստացման կամ վճարման հետ կապված գործառնություններն են: Դրանք ընդգրկում են տվյալ երկրի ռեզիդենտ տնտեսական միավորների ստացած (վճարված) եկամուտները արտասահմանում (հաշվետու երկրում) կատարած ներդրումներից՝ ուղղակի ներդրումներից, պորտֆելային ներդրումներից, այլ ներդրումներից և պահուստային ակտիվներից:

50. *Ուղղակի ներդրումներից եկամուտներ* հոդվածի երկու բաղադրատարրերը՝ կապիտալի և ներդրումային ֆոնդերում մասնակցությունից եկամուտը և տոկոսավճարները, այնպիսի եկամուտներ են, որոնք ստացվել են տվյալ երկրի ռեզիդենտ ուղղակի ներդրողի կողմից (կամ փոխանցվել են ոչ ռեզիդենտ ուղղակի ներդրողին)՝ իր ուղղակի ներդրման չափին համապատասխան:

51. Կապիտալի և ներդրումային ֆոնդերում մասնակցությունից եկամուտը բաժանվում է շահաբաժիններից ու քվազի-կորպորացիաների գանձումներից եկամուտների և վերաներդրված եկամտի: Վերաներդրված եկամուտները վճարային հաշվեկշռում գրանցվում են նախ՝ որպես եկամուտ կապիտալից, այնուհետև ֆինանսական հաշվում՝ որպես ուղղակի ներդրում:

52. Տոկոսային եկամուտները ներառում են կազմակերպությունների միջև պարտքային պարտավորություններից տոկոսները, որոնք ուղղակի ներդրողին են վճարվում արտասահմանյան փոխկապակցված կազմակերպությունների կողմից (և հակառակը): Արտոնյալ բաժնետոմսերից եկամուտները մեթոդաբանության տեսանկյունից շահաբաժին չեն համարվում, այլ դիտարկվում են տոկոսային եկամուտներ: *Լրացուցիչ* հոդվածում տոկոսային եկամուտները ցույց են տրվում նաև անուղղակիորեն գանձվող ֆինանսական միջնորդությունից զատ:

53. Ուղղակի ներդրումներից եկամուտներին վերաբերող բոլոր ենթահոդվածները բաժանվում են 3 տիպի ներդրումային հարաբերությունների.

1. Ուղղակի ներդրողը՝ ուղղակի ներդրմամբ ձեռնարկությունում,
2. Ուղղակի ներդրմամբ ձեռնարկությունը՝ ուղղակի ներդրողի մոտ (հակառակ ներդրում),
3. Փոխկապակցված կազմակերպությունների միջև:

54. Պորտֆելային ներդրումներից եկամուտները ներառում են ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների միջև բաժնետոմսերի, պարտատոմսերի, այլ արժեթղթերի ձեռքբերման հետևանքով առաջացող եկամուտներից հոսքերը, որոնք ընդգրկված չեն ուղղակի ներդրումներ հոդվածում կամ պահուստային ակտիվներում: Այս կատեգորիան, ինչպես ուղղակի ներդրումներից եկամուտները, բաժանվում է երկու խմբի՝ կապիտալից և ներդրումային ֆոնդերին մասնակցությունից եկամտի և տոկոսավճարների:

55. Այլ ներդրումներից եկամուտները բաժանվում են 3 մասի՝ ներառելով գանձումները քվազի-կորպորացիոն եկամուտներից, տոկոսավճարները և ապահովադիրներին, կենսաթոշակային սխեմաներին և ստանդարտացված երաշխավորագրերին հասանելի ներդրումային եկամուտները: Մասնավորապես այս հոդվածում են արտացոլվում ֆինանսական գործիքներից, երկարաժամկետ ու կարճաժամկետ փոխառություններից, վարկերից ու ավանդներից, այլ առևտրային և ֆինանսական պահանջներից տոկոսային մուտքերն ու նմանատիպ վճարները: Տոկոսային եկամուտների գրանցումն իրականացվում է հաշվեգրման սկզբունքի հիման վրա: Եթե տոկոսները հաշվեգրվել են, սակայն դրանց փաստացի վճարում տեղի չի ունեցել որոշ հանգամանքներով պայմանավորված, ապա չվճարված մասն արտացոլվում է ֆինանսական հաշվում՝ գումարվելով համապատասխան գործիքին և արտացոլում է չվճարումների հետ կապված ֆինանսական պարտավորությունների աճը: Քվազի-կորպորացիոն եկամուտներից գանձումների հաշվում արտացոլվում են այն եկամուտները, որոնք ստացվել են փայամասնակցության տեսքով ներդրումներից և չեն գերազանցում կապիտալի 10%-ը: Այս հոդվածում են ներառվում նաև ապահովադիրների, կենսաթոշակային սխեմաների և ստանդարտացված երաշխավորագրերի դիմաց ներդրումային եկամուտները, մասնավորապես, ապահովագրական լրավճարները, որոնք տեխնիկական պահուստների հիման վրա ստացված ոչ ռեզիդենտներին հասանելիք ներդրումային եկամուտների այն մասն են, որը ստանում են ապահովագրական ընկերությունները:

56. *Այլ սկզբնական եկամուտներ* հոդվածը ներառում է *վարձակալություն, ապրանքների և արտադրության հարկեր և սուբսիդիաներ* ենթահոդվածները: *Վարձակալություն* ենթահոդվածը վերաբերում է բնական պաշարների օգտագործման համար վճարված եկամտին, երբ բնական պաշարներ տրամադրող կառուցվածքային միավորը հողի օգտագործման, հանքանյութերի

արդյունահանման, ձկան որսի, անտառի օգտագործման իրավունքը տրամադրում է վարձակալին, ինչի դիմաց ստանում է եկամուտ: *Ապրանքների և արտադրության հարկեր և սուբսիդիաներ* ենթահոդվածը ներառում է անդրսահմանային արտադրանքի արտադրության հարկերը և սուբսիդիաները, որոնք սովորաբար առաջանում են տնտեսական միությունների դեպքում և լինում են ոչ այնքան նշանակալից:

3.1.4 Երկրորդային եկամուտներ

57. Համաձայն ԱՄՀ Ձեռնարկի՝ երկրորդային եկամուտներում արտացոլվում են ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների միջև իրականացված անհատույց փոխանցումները (ընթացիկ տրանսֆերտները): Այս հաշվում ներառվում են ընթացիկ տրանսֆերտների տարբեր տեսակներ՝ ցուցադրելով դրանց դերը տնտեսությունների միջև եկամուտների վերաբաշխման գործում: Վճարային հաշվեկշռում նշված հոդվածը տարանջատվում է ըստ ընթացիկ տրանսֆերտները ստացող/տրամադրող հատվածների՝ պետական հատվածի և ֆինանսական կազմակերպություններ, ոչ ֆինանսական կազմակերպություններ, տնային տնտեսություններ և SSUՈԱԿ-ներին ներկայացնող հատվածի:

58. Պետական կառավարման հատվածի տրանսֆերտները ներառում են տվյալ երկրի պետական մարմինների ու ոչ ռեզիդենտների միջև կատարվող գործառնությունները՝ կապված մարդասիրական օգնության, պետական մարմինների կողմից միջազգային կազմակերպություններին վճարվող անդամավճարների, ընթացիկ հարկերի, տուրքերի և այլնի հետ:

59. *Ընթացիկ տրանսֆերտներ* հոդվածի պետական հատվածն ընդգրկող մասը հիմնականում ներառում է ապրանքների և ծառայությունների տեսքով դրամաշնորհները, ինչպես նաև այլ երկրների կառավարությունների և միջազգային կազմակերպությունների տրամադրած ֆինանսական և տեխնիկական օգնությունը: Այստեղ են ներառվում նաև միջազգային կազմակերպություններին ՀՀ-ի կողմից տրվող անդամակցության վճարները:

60. Պետական հատվածի կողմից ստացված/տրված ընթացիկ տրանսֆերտները, ինչպես նաև մասնավոր հատվածի այլ ընթացիկ տրանսֆերտները տարանջատվում են հետևյալ հիմնական մասերի.

1. ընթացիկ հարկեր եկամտից, հարստությունից և այլն,
2. սոցիալական ապահովություն,
3. սոցիալական նպաստներ,

4. ընթացիկ միջազգային համագործակցություն,
5. տարատեսակ ընթացիկ տրանսֆերտներ:

61. Հարկերի և սոցիալական ապահովության պետական հատվածի հոդվածներում տարանջատվում են ոչ ռեզիդենտ սեզոնային աշխատողների կողմից կամ նրանց անունով ՀՀ-ում վճարված հարկերը, տուրքերը և այլ սոցիալական վճարները:

62. Երկրորդային եկամուտներ հաշվի կրեդիտում արտացոլվում են նաև ստացման ենթակա զուտ ապահովագրավճարները, որոնք ստացվում են համախառն վաստակած ապահովագրավճարներից և ապահովագրական լրավճարներից հանելով ապահովագրական ծառայությունների արժեքը: Այս հաշվի դեբետում են գրանցվում վճարման ենթակա հատուցումները:

63. ՀՀ-ի դեպքում *Երկրորդային եկամուտների սոցիալական ապահովություն* հոդվածի **դեբետում** արտացոլվում են նաև ոչ ռեզիդենտների սոցիալական վճարներին պետության կողմից պետբյուջեից հատկացվող գումարները:

64. Տարատեսակ ընթացիկ տրանսֆերտների մեջ ներառվում են ապրանքների տեսքով մարդասիրական օգնության վերաբերյալ տվյալները, որոնք ստացվում են մաքսային հայտարարագրերից: Ընդ որում, կապիտալ և ներդրումային բնույթի ապրանքները ներառվում են կապիտալ տրանսֆերտների հոդվածում: Ընթացիկ տրանսֆերտները կապիտալ տրանսֆերտներից տարբերելու համար նպատակահարմար է ներկայացնել կապիտալ տրանսֆերտների հատուկ բնութագրիչները: Նախ՝ ապրանքային տեսքով տրանսֆերտները համարվում են կապիտալ, եթե դրանք ներառում են հիմնական միջոցների սեփականության իրավունքի փոխանցում կամ պարտքի ներում, երբ կողմերից ոչ մեկը փոխարենը ոչ մի արժեք չի ստանում: Երկրորդ՝ փողի տեսքով տրանսֆերտները համարվում են կապիտալ, եթե մասնակից մեկ կամ երկու կողմերն էլ այդ տրանսֆերտը ինչ-որ կերպ կապում են հիմնական միջոցների ձեռքբերման կամ օտարման հետ, ինչպես նաև շինարարության նպատակով տրամադրված տրանսֆերտները: Ընթացիկ տրանսֆերտներին է վերաբերում ցանկացած տրանսֆերտ, որը կապիտալ տրանսֆերտ չի համարվում:

65. Ֆինանսական կազմակերպությունների, ոչ ֆինանսական կազմակերպությունների, տնային տնտեսությունների և SSUՈԱԿ-ների տրված/ստացված ընթացիկ տրանսֆերտների գերակշիռ մասը կազմում են անձնական տրանսֆերտները: Վերջիններս ներկայացնում են մի երկրի ռեզիդենտ տնային տնտեսության կողմից ուղարկվող ընթացիկ տրանսֆերտները մեկ այլ երկրի տնային տնտեսությանը: Ըստ ձեռնարկի՝ աշխատողների դրամական փոխանցումներն այլ ընթացիկ տրանսֆերտներից չեն տարանջատվում, և մասնավոր հատվածի ընթացիկ

տրանսֆերտները ներկայացվում են մեկ՝ «անձնական տրանսֆերտներ» հոդվածով, քանի որ գործնականում դժվար է որոշել ուղարկող տնային տնտեսության եկամտի աղբյուրը, կապը տնային տնտեսությունների միջև և ուղարկման նպատակը:

66. Բացի նշվածից, արտաքին հաշիվներում օգտագործվում են նաև որոշ լրացուցիչ հասկացություններ դրամական փոխանցումների վերաբերյալ՝ *անձնական դրամական փոխանցումներ, ընդամենը դրամական փոխանցումներ և ընդամենը դրամական փոխանցումներ ու տնային տնտեսություններին սպասարկող ոչ առևտրային կազմակերպությունների դրամական փոխանցումներ:* Այս հոդվածների կազմումը և հրապարակումը կամավոր բնույթ է կրում՝ կախված տվյալ երկրի առանձնահատկություններից:

67. Անձնական դրամական փոխանցումները ոչ ռեզիդենտ և ռեզիդենտ տնային տնտեսությունների միջև ստացված և ուղարկված բոլոր ընթացիկ և կապիտալ տրանսֆերտներն են՝ դրամային և բնեղեն տեսքով:

68. Ընդամենը դրամական փոխանցումները անձնական դրամական փոխանցումների և սոցիալական հատկացումների հանրագումարն են:

69. Ընդամենը դրամական փոխանցումներ և տրանսֆերտները ՏՏՍՈԱԿ-ների համար սահմանվում են որպես ընդամենը դրամական փոխանցումների և ՏՏՍՈԱԿ-ների կողմից արտաքին աշխարհից ստացված ընթացիկ և կապիտալ տրանսֆերտների գումար:

70. Ընթացիկ անձնական տրանսֆերտների (ընթացիկ տրանսֆերտներ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ տնային տնտեսությունների միջև) վերաբերյալ տվյալները հաշվարկվում են ՀՀ ԿԲ-ի կողմից:

71. Վերոնշյալ հոդվածում են ներառվում նաև միջազգային կազմակերպություններին ՀՀ-ի կողմից տրվող անդամակցության վճարները: Նշված տվյալների համար աղբյուր են ՀՀ ԿԲ-ն և ՀՀ ֆինանսների նախարարությունը, ինչպես նաև, ըստ անհրաժեշտության, ոչ առևտրային կազմակերպությունների շրջանում իրականացվող հարցումները:

3.2 ԿԱՊԻՏԱԼԻ ՀԱՇԻՎ

72. Համաձայն ԱՄՀ Ձեռնարկի՝ կապիտալի հաշվում գրանցվում են այն բոլոր գործարքները, որոնք կապված են հիմնական միջոցների սեփականության իրավունքի անհատույց փոխանցման, արտաքին պարտքի ներման և ոչ ֆինանսական, ոչ արտադրական ակտիվների հետ առնչվող գործառնությունների հետ:

73. Կապիտալ հաշիվը բաժանվում է երկու մասի՝ չարտադրված ոչ ֆինանսական ակտիվների ձեռքբերում կամ տրամադրում և կապիտալ տրանսֆերտներ:

74. *Չարտադրված ոչ ֆինանսական ակտիվների ձեռքբերում կամ տրամադրում* հոդվածը կազմված է երեք հիմնական տարրերից՝ 1. Բնական պաշարներ (բնական պաշարներից օգտվելու իրավունքի թույլատվություն), 2. լիցենզիա, վարձակալության պայմանագրեր, 3. Առևտրային (մարքեթինգային) ակտիվներ և գուդվիլ (բրենդային անվանումներ, առևտրային նշաններ, լոգոտիպեր և այլն):

75. Կապիտալ տրանսֆերտները, ընդհանուր առմամբ, ընդգրկում են հիմնական միջոցների ձեռքբերման կամ շինարարական աշխատանքներ իրականացնելու նպատակով ստացված (տրամադրած) անհատույց միջոցները և փոխադարձ համաձայնությամբ պարտքի ներումը[4]: Կապիտալ տրանսֆերտները տարանջատվում են պետական կառավարման համակարգի և այլ հատվածների (ֆինանսական կազմակերպություններ, ոչ ֆինանսական կազմակերպություններ, տնային տնտեսություններ և SSUՈԱԿ) տրանսֆերտների: Կառավարության տրանսֆերտների գծով գրանցվում են՝

1. կապիտալ տրանսֆերտները իրենցից ներկայացնում են ներդրումային դրամաշնորհները, ինչպես նաև օտարերկրյա պետություններին ռազմական բազաների տրամադրումը.
2. պարտքի ներումը, որն ընդգրկում է երկկողմանի համաձայնությամբ պարտքի ամբողջական կամ մասնակի (այս դեպքում գրանցվում է ներված մասը) ներումը:

76. Մասնավոր հատվածի կապիտալ տրանսֆերտները ներառում են նույնպես պարտքի ներման և մասնավոր հատվածի այլ կապիտալ տրանսֆերտները: Մասնավոր հատվածի այլ կապիտալ տրանսֆերտները ներառում են անշարժ գույք ձեռք բերելու կամ շինարարություն իրականացնելու նպատակով մասնավոր հատվածի ոչ ռեզիդենտներից ստացված/ ոչ ռեզիդենտներին տրամադրված միջոցները:

3.3 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇԻՎ

77. Ֆինանսական հաշվում գրանցվում են այն բոլոր գործառնությունները, որոնք առաջացնում են ֆինանսական պահանջ կամ պարտավորություն ոչ ռեզիդենտների նկատմամբ, ինչպես նաև մոնետար ոսկով ակտիվների փոփոխությունները: Համաձայն ԱՄՀ Ձեռնարկի՝ ֆինանսական հաշվում գրանցվող գործառնությունները դասակարգվում են՝

1. ուղղակի ներդրումներ,

2. պորտֆելային ներդրումներ,
3. ֆինանսական ածանցյալներ (բացառությամբ պահուստների) և աշխատողների ֆոնդային օպցիոններ,
4. այլ ներդրումներ,
5. պահուստային ակտիվներ:

78. Վերոնշյալ բոլոր հոդվածները, բացի պահուստային ակտիվներից, բաժանվում են ակտիվների զուտ ձեռքբերման և պարտավորությունների զուտ ստանձնման, այսինքն՝ յուրաքանչյուր ակտիվային/պասիվային գործիքի մասով ավելացումներն ու նվազումները զտվում են և այնուհետև զուտ հիմքով ցույց տրվում համապատասխանաբար ակտիվների զուտ ձեռքբերման կամ պարտավորությունների զուտ ստանձնման հոդվածներում:

3.3.1.Ուղղակի ներդրումներ

79. Ուղղակի ներդրումը միջազգային ներդրումային գործունեության կատեգորիա է, որը արտահայտում է մի երկրի ռեզիդենտ տնտեսվարող սուբյեկտի ձգտումը ձեռք բերել կայուն ազդեցություն այլ երկրի ձեռնարկությունում: Այս դեպքում տվյալ ռեզիդենտը հանդես է գալիս ուղղակի ներդրողի դերում, իսկ այլ երկրի ձեռնարկությունը՝ ուղղակի ներդրմամբ ձեռնարկության դերում: Կայուն ազդեցության ձեռքբերումը ենթադրում է երկարատև հարաբերությունների հաստատում ուղղակի ներդրողի և նշված ընկերության միջև, ինչպես նաև ներդրողի կողմից մասնակցություն ձեռնարկության կառավարմանը: Ուղղակի ներդրում են համարվում ոչ միայն երկու ընկերությունների միջև սկզբնական հարաբերությունների հիմք հանդիսացած գործառնությունները, այլ նաև բոլոր հետագա ֆինանսական գործառնությունները, որոնք տեղի են ունենում այդ ընկերությունների կամ նրանց մասնաճյուղերի միջև:

80. Համաձայն ԱՄՀ Ձեռնարկի՝ ուղղակի ներդրումներ են համարվում ոչ ռեզիդենտի կողմից ընկերության բաժնետիրական կապիտալում կատարված ներդրումները կամ ձեռք բերված փայամասնակցությունը, եթե նրանք ապահովում են ձայնի իրավունք տվող բաժնեմասի 10%-ը և ավելին: Միջազգային մեթոդաբանության մեջ ընդունված է այն ենթադրությունը, որ ներդրման նման չափը ներդրողին հնարավորություն է ընձեռում մասնակցել ձեռնարկության կառավարմանը: Կազմակերպությանը, որտեղ իրականացվում է այդպիսի ներդրում, անվանում են ուղղակի ներդրմամբ ձեռնարկություն, իսկ ոչ ռեզիդենտ ներդրողին՝ ուղղակի ներդրող: Եթե ներդրողը կազմակերպության կապիտալում ունի 10 % և ավելի մասնակցություն, սակայն չի տնօրինում

[4] Ավելի մանրամասն կապիտալ տրանսֆերտները և դրանց տարբերությունը ընթացիկ տրանսֆերտներից քննարկված է *Ընթացիկ տրանսֆերտներ* հատվածում:

ձայների առնվազն 10%-ին, ապա ներդրումը ուղղակի չի համարվում (օրինակ՝ կոոպերատիվների դեպքում):

81. Ուղղակի ներդրումները կարելի է բնութագրել որպես այն բոլոր ֆինանսական հարաբերությունների ամբողջություն, որոնք առաջանում, փոփոխվում և դադարում են ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ տնտեսվարող սուբյեկտների միջև, որոնցից մեկը տնօրինում է մյուսի սովորական բաժնետոմսերի կամ քվեարկության իրավունք տվող ձայների առնվազն 10%-ը: Օրինակ՝ մայր ընկերության կողմից դուստր ընկերությանը տրամադրած փոխառությունը դիտվում է որպես ուղղակի ներդրում: Ըստ որում, հաշվի են առնվում և՛ ուղղակի ներդրողի կողմից ուղղակի ներդրմամբ ընկերությունում, և՛ ուղղակի ներդրման ընկերության կողմից ուղղակի ներդրողի մոտ իրականացված ներդրումները:

82. Բացի ուղղակի ներդրող ուղղակի ներդրումով ձեռնարկություն փոխհարաբերություններից, երկու ձեռնարկությունների միջև կարող են լինել «միջնորդավորված» ներդրումային հարաբերություններ, թեև նրանց միջև բուն ներդրումներ իրականացված չեն: Այդպիսի օրինակ կարող են լինել նույն մայր ընկերության՝ տարբեր երկրներում գտնվող երկու ուղղակի ներդրումներով ձեռնարկությունները միմյանց նկատմամբ: Թեև նրանց միջև գոյություն չունեն ներդրումային հարաբերություններ, իրար մեջ իրականացված բոլոր գործառնությունները պետք է արտացոլվեն վճարային հաշվեկշռի ուղղակի ներդրումների հոդվածում: Նման հարաբերություններ կարող են առաջանալ նաև, երբ ռեզիդենտ ներդրողն ունի նաև դուստր ձեռնարկություն արտերկրում:

83. Ուղղակի ներդրումներից բացառություն են համարվում այն դեպքերը, երբ և՛ ուղղակի ներդրող ձեռնարկությունը, և՛ ուղղակի ներդրմամբ ձեռնարկությունը ֆինանսական կազմակերպություններ են (բացառությամբ ապահովագրական ընկերությունների): Այս դեպքում բոլոր ֆինանսական պարտավորությունները դիտարկվում են որպես սովորական գործառնություններ ֆինանսական երկու կազմակերպությունների միջև և գրանցվում համապատասխան գործիքների հոդվածներում:

84. Վճարային հաշվեկշռում ուղղակի ներդրումները ինչպես և ֆինանսական հաշվի մնացած հոդվածները դասակարգվում են ֆինանսական ակտիվների զուտ ձեռքբերման և պարտավորությունների զուտ ստանձնման, որոնցից յուրաքանչյուրն իր հերթին տարանջատվում է ըստ հետևյալ ենթահոդվածների՝

1. **Բաժնետիրական կապիտալին և ներդրումային ֆոնդերին մասնակցություն**: Այս հոդվածը ներառում է ներդրողի կողմից ուղղակի ներդրմամբ կազմակերպության կապիտալում կատարված ներդրումները՝ բաժնետոմսերի ձեռքբերման կամ

փայամասնակցության տեսքով, ինչպես նաև վերաներդրված եկամուտը: Վերջինս ներկայացնում է ուղղակի ներդրման ձեռնարկության տարեկան չբաշխված շահույթի՝ օտարերկրյա բաժնետիրոջ մասնակցության համապատասխան մասը, քանի որ համարվում է, որ չբաշխված շահույթը ներդրողների լրացուցիչ ներդրումն է, այսինքն՝ օտարերկրյա ներդրողն իրականացնում է ուղղակի ներդրում:

2. **Պարտքի գործիքներ:** Այս ենթահոդվածում արտացոլվում են այն բոլոր հարաբերությունները, որոնք ստեղծում են պարտավորություն կամ պահանջ ուղղակի ներդրողի և ուղղակի ներդրմամբ կազմակերպության միջև: Այստեղ ընդգրկվում են ինչպես սովորական և առևտրային վարկերը, այնպես էլ ներդրումները պարտատոմսերում և այլ պարտքային գործիքներում:

85. Վերոնշյալ հոդվածները տարանջատվում են ըստ ներդրման ուղղության.

1. ուղղակի ներդրողը ուղղակի ներդրմամբ ձեռնարկությունում,
2. ուղղակի ներդրմամբ ձեռնարկությունը ուղղակի ներդրողի մոտ (հակառակ ներդրում),
3. փոխկապակցված կազմակերպությունների միջև:

3.3.2. Պորտֆելային ներդրումներ

86. Համաձայն ԱՄՀ Ձեռնարկի՝ պորտֆելային ներդրումը բնորոշվում է որպես ներդրում ոչ ռեզիդենտի թողարկած արժեթղթերում՝ բաժնետոմսերում, պարտատոմսերում և դրամի շուկայի գործիքներում, որոնք ընդգրկված չեն ուղղակի ներդրումներ հոդվածում կամ պահուստային ակտիվներում: Պորտֆելային ներդրումները արտասահմանյան արժեթղթերում կատարված ներդրումներն են, որոնք ներդրողին ընձեռում են ներդրման օբյեկտի նկատմամբ սահմանափակ ազդեցություն: Բաժնետոմսերում կատարված պորտֆելային ներդրումներն ուղղակի ներդրումներից տարանջատելու համար պայմանական չափանիշ է համարվում ընկերության՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի մինչև 10%-ի տնօրինումը: Վճարային հաշվեկշռի ձեռնարկում պորտֆելային ներդրումների տարանջատումը, ինչպես և ուղղակի ներդրումների դեպքում, կատարվում է ֆինանսական ակտիվների զուտ ձեռքբերման և պարտավորությունների զուտ ստանձնման հիմքով: Ըստ գործիքների տարանջատումը ևս կրկնում է ուղղակի ներդրումների հոդվածը, բացառությամբ վերաներդրված եկամտի, որը պորտֆելային ներդրումների պարագայում կարող է առաջանալ միայն ներդրումային ֆոնդերում մասնաբաժնի պարագայում:

3.3.3. Ֆինանսական ածանցյալներ (բացառությամբ պահուստների) և աշխատողների ֆոնդային օպցիոններ

87. Ներկա պահին ֆինանսական ածանցյալների վերաբերյալ տեղեկություն առկա է միայն ֆինանսական հատվածի վերաբերյալ:

3.3.4. Այլ ներդրումներ

88. Համաձայն ԱՄՀ Ձեռնարկի՝ վճարային հաշվեկշռի «Այլ ներդրումներ» հոդվածը ներառում է այն բոլոր ներդրումները, որոնք չեն ընդգրկվում ուղղակի կամ պորտֆելային ներդրումների մեջ: Այն բաղկացած է հետևյալ բաժիններից՝

- Այլ կապիտալ,
- Դրամական միջոցներ և ավանդներ,
- Վարկեր,
- Ապահովագրական, կենսաթոշակային ստանդարտացված ծրագրեր,
- Առևտրային վարկեր և կանխավճարներ,
- Այլ հաշիվներ ստացվող/վճարվող,
- ՀՓԻ (պարտավորությունների զուտ ստանձնում):

89. Յուրաքանչյուր բաժին տարանջատվում է ֆինանսական ակտիվների զուտ ձեռքբերման և ֆինանսական պարտավորությունների զուտ ստանձնման: Իր հերթին ակտիվներն ու պարտավորությունները (բացառությամբ այլ կապիտալի և ՀՓԻ-ի) տարանջատվում են չորս հատվածների՝

1. Կենտրոնական բանկ,
2. Ավանդային կազմակերպություններ, բացի կենտրոնական բանկից,
3. Պետական կառավարում,
4. Այլ հատվածներ (այլ ֆինանսական կազմակերպություններ և ոչ ֆինանսական կազմակերպություններ, տնային տնտեսություններ և ՏՏՍՈԱԿ-ներ):

90. *Այլ կապիտալի* հոդվածը չի տարանջատվում ըստ հատվածների և վերաբերում է օտարերկրյա կազմակերպությունների կապիտալում ոչ բաժնետոմսերի տեսքով ունեցած փայամասնակցությանը: Որպես օրինակ՝ կարելի է նշել ԿԲ անդամակցությունը ՍՎԻՖԹ փոխանցումային համակարգին:

91. *ՀՓԻ՝ պարտավորությունների զուտ սպանձնում* տողը ներառում է ԱՄՀ կողմից ՀՀ ԿԲ-ին ՀՓԻ-ով միջոցների բաշխումները:

92. *Այլ ներդրումներ-դրամական միջոցների* մեջ ընդգրկվում են շրջանառության մեջ գտնվող և, որպես կանոն, վճարումների համար օգտագործվող արտարժույթը, բացառությամբ հուշադրամների և չշրջանառվող թղթադրամների:

93. *Այլ ներդրումներ-ավանդներ* մասում գրանցվում են այն ցպահանջ և ժամկետային ավանդները, որոնք հանդիսանում են ոչ ռեզիդենտների պարտավորություն ռեզիդենտների նկատմամբ կամ հակառակը:

94. Հարկ է նշել, որ *վճարային հաշվեկշռի դրամական միջոցներ և ավանդներ* հոդվածն ունի նաև կարգավորող բնույթ: Հետևելով ԱՄՀ-ի առաջարկություններին՝ այս հոդվածը կարող է հանդես գալ որպես մնացորդային հոդված, ինչը ենթադրում է, որ վճարային հաշվեկշռում արտացոլված մյուս հոդվածների հաշվեկշռվածությունն ապահովելու նպատակով վերջինս կարող է փոփոխությունների ենթարկվել, այսինքն՝ անհամապատասխանությունների մի մասը հավասարակշռվում է այս հոդվածի միջոցով: Գնահատականների հիմքում դրվում են տնտեսական տարբեր ցուցանիշների հիման վրա արված փորձագիտական դատողությունները: Որպես այդպիսի ցուցանիշերի օրինակ դիտարկվում են տնային տնտեսությունների արտարժույթային ավանդների փոփոխությունը, բնակչության միջոցներով կատարված շինարարությունը, առևտրային բանկերի կողմից արտարժույթի զուտ առքի ծավալները և այլն: Այս փուլում դիտարկվում են նաև վճարային հաշվեկշռի վրա ազդեցություն թողնող մամուլի հրապարակումներում տեղ գտած տեղեկությունները, եթե վերջիններս, ըստ փորձագիտական գնահատականի, իրենց պատշաճ արտացոլումը չեն գտել պաշտոնական վիճակագրության մեջ:

95. *Այլ ներդրումներ-վարկեր* հոդվածում արտացոլվում են ոչ ռեզիդենտներին տրված և ոչ ռեզիդենտներից ստացված բոլոր կարճաժամկետ և երկարաժամկետ վարկերը, ֆինանսական լիզինգային պայմանագրերը, օվերդրաֆտները,վարկային գծերը և այլ նմանատիպ ֆինանսական գործիքները: Վարկերի թվին են դասվում ֆինանսական ակտիվները, որոնք առաջանում են այն գործարքի հետևանքով, որի դեպքում վարկատուն փոխառուին ուղղակիորեն տրամադրում է դրամական միջոցներ:

96. Այլ ներդրումներ- ապահովագրական, կենսաթոշակային և ստանդարտացված ծրագրեր՝ ֆինանսական ակտիվների զուտ ձեռքբերում հոդվածում արտացոլվում է ոչ ռեզիդենտ վերաապահովագրողի մասնաբաժնի փոփոխությունը պահուստներում, իսկ ֆինանսական

պարտավորությունների զուտ ստանձնում հոդվածում՝ ոչ ռեզիդենտ ապահովադիրների գծով ձևավորված պահուստների փոփոխությունը: Այս հոդվածի հաշվառման համար անհրաժեշտ տվյալները ստացվում են ապահովագրական ընկերությունների հաշվեկշռից, ընդ որում, ոչ բավարար տվյալների պատճառով գործառնությունները ստացվում են դիրքերի տարբերությունից: Ֆինանսական հաշվում արտացոլվող *ապահովագրական պահուստները* հանդիսանում են պարտավորություններ ապահովագրողների համար և ակտիվներ ապահովադիրների համար:

97. *Ապահովագրական, կենսաթոշակային և ստանդարտացված ծրագրեր* հոդվածում տողի *կենսաթոշակի ստացման իրավունքը* ոչ ռեզիդենտների նկատմամբ կենսաթոշակների գծով պարտավորությունների զուտ ստանձնումն է: Այն հաշվարկվում է որպես ոչ ռեզիդենտների կողմից վճարված կենսաթոշակային վճարների, պետության կողմից փոխանցված գումարների և Սկզբնական եկամուտների Ներդրումային եկամուտներ հոդվածում կենսաթոշակային վճարների հիման վրա ստացված ոչ ռեզիդենտներին հասանելիք տոկոսային եկամուտների հանրագումարի և վճարված թոշակների տարբերություն:

98. *Այլ ներդրումներ-առևտրային վարկեր և կանխավճարներ*՝ բնորոշվում է որպես պահանջ և պարտավորություն, որոնք առաջանում են այն պատճառով, որ վաճառողը վարկ է տրամադրում անմիջապես ապրանքների և ծառայությունների գնորդին (հնարավոր է նաև, որ ապրանքների ու ծառայությունների դիմաց վճարումը գնորդի կողմից կատարվի սեփականության իրավունքի փոխանցումից հետո) կամ գնորդը կանխավճար է տալիս այդ գծով չավարտված կամ չսկսած աշխատանքների համար: Այն դեպքում, երբ կազմակերպությունը առևտրի ֆինանսավորման համար միջոցներ ստանում է մի կառուցվածքային միավորից, որը չի համարվում ապրանք կամ ծառայություն արտադրող կամ առաքող, այդպիսի վարկը չի ներառվում առևտրային վարկերի մեջ, այլ ներառվում է «Վարկեր» հոդվածում, մասնավորապես, երբ առևտրի կազմակերպությունը ֆինանսավորման համար վարկ է վերցնում առևտրային բանկից:

99. *Այլ ներդրումներ-այլ հաշիվներ ստացվող/վճարվող* հոդվածում գրանցվում են այն բոլոր գործառնությունները, որոնք չեն ներառվել ուղղակի, պորտֆելային ներդրումներ հոդվածներում և այլ ներդրումների մնացած ենթահոդվածներում:

3.3.5. Միջազգային պահուստների փոփոխություն

100. Համաձայն ԱՄՀ Ձեռնարկի՝ երկրի միջազգային (արտաքին) պահուստները «այն արտաքին ակտիվներն են, որոնք դրամավարկային կարգավորման մարմինների հսկողության ներքո են և ցանկացած պահի կարող են օգտագործվել վճարային հաշվեկշռի անհաշվեկշռվածությունների ուղղակի ֆինանսավորման համար, ինչպես նաև այդ անհաշվեկշռվածությունների վրա անուղղակիորեն ազդելու նպատակով՝ արտարժույթի շուկայում ինտերվենցիաներ իրականացնելու միջոցով, որոնք ազդում են փոխարժեքի վրա և/կամ կարող են օգտագործվել այլ նպատակներով[5]»:

101. Վճարային հաշվեկշռում արտացոլվում է միջազգային պահուստների փոփոխությունը ժամանակի որոշակի հատվածում: Ընդ որում, պահուստների դասակարգումը կատարվում է միջազգային չափանիշներին համապատասխան:

102. Բացի արժեթղթերից, մնացած բոլոր գործառնությունները գրանցվում են հաշվեկշռային տվյալների հիման վրա: Ըստ առանձին հիմնական արժույթների հաշվեկշռային դիրքերի ամսական տարբերությունները բազմապատկվում են միջին փոխարժեքով, որի արդյունքում ստացվում է գործառնությունների գնահատականը: Քանի որ բացի արժեթղթերից, այլ գործիքները չեն պարունակում գնի փոփոխություն, ապա փոխարժեքի հաշվին փոփոխությունը հաշվարկվում է մնացորդային եղանակով (դոլարային արտահայտությամբ դիրքերի տարբերությունից նվազեցվում է գործառնությունը): Գործիքների դասակարգումը իրականացվում է ըստ BPM6 ձեռնարկի:

Գլուխ 4. Միջազգային ներդրումային դիրք

103. Միջազգային ներդրումային դիրքը վիճակագրական հաշվետվություն է, որտեղ արտացոլվում են ժամանակի որոշակի պահի դրությամբ երկրի արտաքին ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները: Ընդ որում, հաշվետվությունում արտացոլվում են այն բոլոր փոփոխությունները, որոնք կատարվել են ժամանակի որոշակի միավորի ընթացքում ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների հետ՝ գործառնությունները, փոխարժեքի փոփոխությունները, գնային փոփոխությունները և այլ փոփոխությունները հաշվի առնելով:

[5] Միջազգային պահուստների դասակարգման մանրամասն նկարագրությունը տրված է «ՀՀ դրամավարկային և բանկային վիճակագրության ձեռնարկում» 2000թ:

Աղյուսակ 5. Միջազգային ներդրումային դիրքի կառուցվածքը

	Ներդրումային դիրքը տարվա սկզբին	Փոփոխություններ՝ ի հաշիվ				Ներդրումային դիրքը տարվա վերջին
		Գործառնությունների	Այլ ճշտումների	Փոխարժեքի փոփոխությունների	Գների փոփոխությունների	
Ակտիվներ						
Պարտավորություններ						
Զուտ ներդրումային դիրք						

104. Ինչպես վճարային հաշվեկշռի ֆինանսական հաշիվը, այնպես էլ միջազգային ներդրումային դիրքը, կազմված է երկու՝ արտաքին ակտիվներ և արտաքին պարտավորություններ մասերից: Արտաքին ակտիվներն արտացոլում են արտաքին աշխարհի (ոչ ռեզիդենտների) նկատմամբ ռեզիդենտների պահանջները, իսկ արտաքին պարտավորությունները՝ ոչ ռեզիդենտների նկատմամբ պարտավորությունները: Ինչպես արտաքին ակտիվները, այնպես էլ արտաքին պարտավորությունները տարանջատվում են վճարային հաշվեկշռի ֆինանսական հաշվի նման, այսինքն՝ հոդվածների դասակարգումն ըստ հատվածների ու ֆինանսական գործիքների նույնությամբ համապատասխանում է վճարային հաշվեկշռի ֆինանսական հաշվի կառուցվածքին:

105. Արտաքին ֆինանսական ակտիվների և պարտավորությունների տարբերություն հանդիսացող զուտ ներդրումային դիրքը երկրի տնտեսական իրավիճակը և արտերկրների հետ հարաբերությունները բնութագրող ցուցանիշ է: Դրական ներդրումային դիրքը նշանակում է, որ տվյալ երկիրը հանդիսանում է պարտատեր, իսկ բացասականի դեպքում՝ պարտապան:

106. Ժամանակահատվածի ընթացքում միջազգային ներդրումային դիրքում փոփոխություններ կարող են տեղի ունենալ գործառնությունների, գների, փոխարժեքի և այլ փոփոխությունների հաշվին: Գործառնությունների հաշվին փոփոխությունների վերաբերյալ տեղեկությունը համապատասխանում է վճարային հաշվեկշռի ֆինանսական հաշվի հոդվածներով արտացոլված տեղեկատվությանը, որոնց վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման աղբյուրները ներկայացված են Հավելված 1-ում: Հետևաբար, ստորև կներկայացվի միջազգային ներդրումային դիրքում միայն փոխարժեքի, գների և այլ ճշտումների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումն ու ներկայացումը ըստ առանձին ֆինանսական գործիքների՝ ուղղակի ներդրումներ, պորտֆելային ներդրումներ, այլ ներդրումներ և պահուստային ակտիվներ:

107. Փոխարժեքի հետ կապված փոփոխություններն առաջանում են առանձին ֆինանսական գործիքների արժույթների՝ դոլարի նկատմամբ տատանման հետևանքով: Այն դեպքում, երբ գործիքների գծով չի ենթադրվում գների հաշվին փոփոխություններ, ապա փոխարժեքի հաշվին

փոփոխությունը հաշվարկվում է մնացորդային եղանակով, այսինքն դոլարային արտահայտությամբ դիրքերի տարբերությունից նվազեցվում է գործառնությունը: Այստեղ կարող են բացառություններ լիներ «այլ ճշտումների» առկայության դեպքում:

108. Գնային փոփոխությունները արտացոլում են առանձին ֆինանսական գործիքների (օրինակ՝ արժեթղթերի) գների տատանման հետևանքով ակտիվներում կամ պարտավորություններում տեղի ունեցած արժեքային փոփոխությունները:

109. *Այլ ճշտումներ* սյան մեջ գրանցվում են այն փոփոխությունները, որոնք կապված են ներդրումների վերադասակարգման, պարտատիրոջ կողմից պարտքի միակողմանի դուրսգրման, արտակարգ պատահարի արդյունքում ակտիվի ոչնչացման, ոսկու մոնետիզացման և դեմոնետիզացման և այլ նման դեպքերի հետ:

Գլուխ 5. Համախառն արտաքին պարտք

110. Համախառն արտաքին պարտքը ՀՀ ռեզիդենտների կողմից օգտագործված (փաստացի ներգրավված) և չմարված պարտավորություններն են ոչ ռեզիդենտների հանդեպ, որոնք ապագայում ենթակա են վճարման և/կամ դրանց գծով նախատեսվում են տոկոսավճարներ: Պայմանագրային պարտավորություններով նախատեսված, բայց դեռևս փաստացի չբաշխված ֆինասնական միջոցները չեն ներառվում համախառն արտաքին պարտքի մեջ:

111. Արտաքին պարտքը վիճակագրական հաշվետվություն է, որտեղ արտացոլվում են տվյալ պահի դրությամբ հաշվետու երկրի գործող ոչ պայմանական արտաքին պարտավորությունները, որոնք ապագայում նախատեսում են տոկոսավճարների և/կամ հիմնական գումարի մարումների տեսքով վճարներ: Այսինքն՝ արտաքին պարտքը ներառում է այն բոլոր պարտքային պարտավորությունները, որոնք վերջիվերջո պետք է մարվեն: Արտաքին պարտքը միջազգային ներդրումային դիրքից տարբերվում է հենց վերադարձելիության սկզբունքով: Այսինքն՝ արտաքին պարտքը չի ներառում ուղղակի ներդրումները բաժնետիրական կապիտալում և վերաներդրված շահույթը (սակայն ներառում է պարքտային գործիքները), պորտֆելային ներդրումները կապիտալում և ցանկացած այլ տեսակի ներդրումներ բաժնետիրական կապիտալում, բացառությամբ արտոնյալ բաժնետոմսերից (միայն այն դեպքում, եթե արտոնյալ բաժնետոմսերի գծով կա հետգնման պայման), քանի որ դրանք ենթակա չեն վերադարձման նորմալ գործունեության դեպքում: Բացառվում են նաև ֆինանսական ածանցյալները, որոնք կապված չեն կապիտալի տրամադրման հետ:

Գլուխ 6. Արտաքին հատվածի վիճակագրության հրապարակված տվյալների վերանայումների իրականացում

112. ՀՀ ԿԲ-ն արտաքին հատվածի վիճակագրության վարման ընթացքում պարբերաբար իրականացնում է վճարային հաշվեկշիռը ձևավորող հոդվածների բարելավման աշխատանքներ, որոնք իրենց արտացոլումն են գտնում արտաքին հատվածի վիճակագրության տարեկան վերանայումներում՝ թե՛ ընթացիկ և թե՛ առավել ծավալուն: Այսպես՝ նախորդող տարիների ժամանակային շարքերի վերանայումները հիմնականում իրականացվում են յուրաքանչյուր տարի, հունիսի վերջին աշխատանքային օրը՝ առաջին եռամսյակի արտաքին հաշիվների վիճակագրության հրապարակմանը զուգահեռ: Ընդ որում, շարքերի վերանայումը կարող է ընդգրկել ինչպես մի քանի տարի, այնպես էլ՝ ամբողջ շարքը: Ինչ վերաբերում է ընթացիկ տարվա նախորդ եռամսյակների տվյալների վերանայումներին, ապա դրանք իրականացվում են ընթացիկ եռամսյակի հաշվետվության հրապարակմանը զուգահեռ:

113. Այսպես՝ վերլուծելով արտաքին հաշիվների վիճակագրության տվյալների փոփոխությունները ժամանակի ընթացքում, կարող ենք առանձնացնել հետևյալ տեսակները.

1. **Ընթացիկ վերանայումներ**: Հաշվետու սուբյեկտների կողմից տեղեկատվության ճշգրտման կամ տեղեկատվության հրապարակման ժամանակային անհամապատասխանության (լագ) հիման վրա իրականացված վերանայումներ: Սրանք հիմնականում վերաբերում են ընթացիկ տարվա եռամսյակների վերանայումներին: Այս դեպքում ազդեցություն կարող են կրել հաշվետու տարվա նախորդ եռամսյակների տվյալները: Կարելի է առանձնացնել ընթացիկ վերանայումների մի քանի հիմնական հիմքեր.

   ա) Ապրանքների առևտուր. Մաքսային ծառայության կողմից տվյալները վերանայվում են յուրաքանչյուր ամիս՝ պայմանավորված տարբեր գործոններով. նախ՝ հիմք ընդունելով ԵԱՏՄ անդամ երկրների հետ առևտրի պարագայում հաշվետվությունների ստացման ժամանակացույցը և երկրորդը՝ նշված վիճակագրական տվյալներում անճշտությունների ճշգրտման համար սահմանված ժամկետները երբեմն կարող են կազմել մի քանի ամիս:
   բ) Ոչ ֆինանսական մասնավոր հատվածի կազմակերպությունների կողմից օտարերկրյա ներդրումների վերաբերյալ տրամադրված տվյալների ճշգրտումը կարող է իրականացվել ժամանակային լագով: Մասնավորապես, տարվա ավարտից հետո հաշվետվությունների տրամադրման ժամկետներով պայմանավորված, երբեմն հնարավոր չի լինում իրականացնել տվյալների լիարժեք ստուգում: Այս դեպքում ճշգրտումները կարող են իրականացվել մյուս եռամսյակ՝ հերթական հրապարակմանը զուգահեռ:
   գ) Նմանատիպ խնդիրներ կարող են առաջանալ նաև ֆինանսական համակարգի տվյալների հետ, երբ ընթացիկ եռամսյակի ճշգրտումներին զուգահեռ փոփոխություններ են իրականացվում նաև նախորդ եռամսյակների տվյալներում:
   դ) Արտաքին հաշիվների վիճակագրության կազմման ընթացքում օգտագործվող որոշ տվյալներ հրապարակվում են մեկ եռամսյակ ժամանակային լագով, օրինակ՝ Հաշվարկների Միջազգային Բանկի (BIS) կողմից հրապարակվող վիճակագրությունը:

2. **Պլանային տարեկան վերանայումներ**: Յուրաքանչյուր տարվա հունիսի վերջին աշխատանքային օրը իրականացվում են տարեկան վերանայումներ, որոնք սովորաբար

կարող են ընդգրկել մի քանի նախորդ տարիների տվյալները: Վերնայման «պատուհանը» սովորաբար կազմում է 2-3 տարի: Այս վերանայումների հիմքում ընկած են առավել ամբողջական տվյալները և խաչաձև ստուգումները: Որպես տարեկան վերանայումների համար հիմք հանդիսացող պատճառներ, կարելի է նշել հետևյալները.

ա) Ներդրումների վիճակագրության ամբողջականությունն ու ճշգրտությունը բարձրացնելու նպատակով պարբերաբար իրականացվում են այլ հասանելի տվյալների հետ համադրումներ և սրուգումներ: Օրինակ՝ կազմակերպությունների կողմից տրամադրված հաշվետվական տվյալների և հրապարակային հաշվետվությունների համեմատություն, գործընկեր երկրների կողմից հրապարակված վիճակագրության հետ հայելային համադրությունների իրականացում, ֆինանսական, դեմոգրաֆիկական, ազգային հաշիվների վիճակագրության հետ համադրումներ: Հայտնաբերված անհամապատասխանությունների հիման վրա հնարավոր է նաև մի քանի նախորդ ժամանակաշրջանների տվյալների ճշտումների իրականացում: Այստեղ հարկ է նշել նաև վերաներդրված եկամտի տարեկան ճշգրտումները՝ պայմանավորված այն հանգամանքով, որ միջին չափի կազմակերպությունները հաճախ չեն տիրապետում եռամսյակային կտրվածքով ճշգրիտ տվյալների:

բ) Արտաքին հատվածի վիճակագրության կազմման նպատակով որոշ հոդվածների գծով տվյալների թերի աղբյուրների պարագայում վերջիններիս համար հիմք են հանդիսանում տարեկան հարցումների արդյունքները: Որպես օրինակ՝ կարելի է նշել ոչ առևտրային կազմակերպությունների կողմից ստացված միջոցների վերաբերյալ իրականացվող հարցումները, պետական վարկային միջոցների հաշվին Ծրագրերի իրականացման գրասենյակների (ԾԻԳ) իրականացված ծախսերի հարցումը, պետական մարմինների գործուղումների վերաբերյալ հարցումները և այլն:

3. **Հենանիշային վերանայումներ**: Այս տիպի փոփոխությունները սովորաբար տեղի են ունենում մի քանի տարին մեկ, նույնպես հունիսի վերջին աշխատանքային օրը: Վերջիններիս հիմքում ընկած են նոր ցուցանիշների ներառումը վիճակագրական շարքի մեջ, գոյություն ունեցող ցուցանիշների մասով ի հայտ եկած տեղեկատվության նոր աղբյուրների օգտագործումը, մի քանի տարին մեկ կրկնող հարցումների կրկնությունը: Վերջիններս հիմնականում պայմանավորված են մի շարք հոդվածների կազմման ընթացքում կիրառվող գործակիցների վերանայման անհրաժեշտությամբ: Այսպիսի վերանյումների պատճառ կարող են դիտվել նաև ֆինանսական և թվային նոր գործիքների առաջացումն ու զարգացումները, ինչպիսիք են, օրինակ, կանաչ պարտատոմսերը կամ կրիպտոակտիվների շուկայի զարգացումները: Այստեղ կարելի է նշել նաև մեթոդաբանական փոփոխությունների կամ բարելավումների արդյունքում իրականացվող վերանայումները, որոնք նույնպես վիճակագրության համադրելիության սկզբունքն ապահովելու նպատակով, կարող են ներառել տարիների երկար շարք: Վերոնշյալ վերանայումների օրինակներից կարելի է նշել հետևայլները.

ա) Լայնածավալ հարցումների և գնահատականների իրականացում, օրինակ՝ «Դրամական փոխանցում սպացող տնային տնտեսությունների հարցում», «Միջազգային այցելուների հարցում», «վերամշակմամբ զբաղվող ընկերությունների հարցում», CIF-FOB անցումային գործակիցների գնահատում և այլն:

բ) Մեթոդաբանության տեղայնացման արդյունքում նոր ցուցանիշների հաշվարկ և ներառում վիճակագրական շարքերում, օրինակ՝ ԱՀՖՄԾ (FISIM):

գ) Նոր բացահայտված կամ ի հայտ եկած տվյալների աղբյուրների հիման վրա իրականացվող վերանայումներ, ինչպիսիք են՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից հրապարակվող՝ ոչ առևտրային կազմակերպությունների կողմից արտերկրից սպացվող միջոցների հիման վրա երկրորդային եկամուտների լրահաշվարկներ, ապրանքների և ծառայությունների ներմուծման լրահաշվարկ՝ հիմնվելով քարտային գործարքների վերաբերյալ տվյալների վրա և այլն:

դ) BPM5-ից BPM6 կազմման ձեռնարկին անցումը:

4. **Բացառիկ վերանայումներ**: Հազվադեպ դեպքերում, տվյալների ընդհանուր որակի և մեկնաբանման վրա ազդող բացթողումների, սխալների կամ անճշտությունների բացահայտման դեպքում հնարավոր է՝ իրականացվի արտահերթ վերանայում՝ որպես առաջնահերթություն ունենալով արժանահավատ վիճակագրություն կազմումը:

114. Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է շեշտել, որ բացի ընթացիկ վերանայումներից, մնացած բոլորի դեպքում հրապարակումը ներառում է իրականացված վերանայված հոդվածների, հիմքերի և վերանայված տվյալների «պատուհանի» բացահայտում:

Հավելված 1. ՀՀ վճարային հաշվեկշռի, միջազգային ներդրումային դիրքի և արտաքին պարտքի կազմման տվյալների հիմնական աղբյուրները

Աղբյուրի անվանումը	Հոդվածը	Տվյալների աղբյուրը/հաշվետու սուբյեկտը և ստացման հաճախականությունը
ՀՀ կենտրոնական բանկի կողմից հավաքվող տվյալներ		
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի փետրվարի 26-ի թիվ 50-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ով սահմանված (այսուհետ՝ Կանոնակարգ 3) թիվ 18 հաշվետվություն ոչ ռեզիդենտների հետ իրականացված գործառնությունների և ոչ ռեզիդենտների հետ ֆինանսական դիրքերի վերաբերյալ	Ֆինանսական ծառայություններ Սկզբնական եկամուտներ-ներդրումներ Ուղղակի,Պորտֆելային ներդրումներ, Այլ ներդրումներ Ֆինանսական ածանցյալներ	Առևտրային բանկեր Վարկային կազմակերպություններ *եռամսյակային*
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 366-Ն որոշմամբ հաստատված «Ապահովագրական ընկերությունների հաշվետվությունների ձևերը, դրանցում ներառվող տեղեկատվությունը, ներկայացնելու կարգը և ժամկետները» կանոնակարգ 3/04-ով սահմանված թիվ 14 հաշվետվություն ապահովագրական ընկերություն և ոչ ռեզիդենտների միջև իրականացված գործառնությունների վերաբերյալ	Ապահովագրական ծառայություններ Սկզբնական եկամուտներ-ներդրումներ, Վերաներդրված շահույթ Ուղղակի, պորտֆելային ներդրումներ	Ապահովագրական ընկերություններ *եռամսյակային*
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2025 թվականի սեպտեմբերի 9-ի թիվ	Սկզբնական Եկամուտ-Աշխատողների	Առևտրային բանկեր *ամսական*

150-Ն որոշմամբ հաստատված թիվ 24 ծանոթագրություն դրամական միջոցների փոխանցումների վերաբերյալ	վարձատրություն Երկրորդային եկամուտներ-Ընթացիկ անձնական տրանսֆերտներ	
Կանոնակարգ 3-ով սահմանված թիվ 1 Հաշվեկշիռ	Սկզբնական եկամուտ-Վերաներդրված շահույթ Ուղղակի ներդրումներ Պորտֆելային ներդրումներ Ֆինանսական ածացյալներ Կանխիկ և ավանդներ	Առտրային բանկեր Վարկային կազմակերպություններ Ներդրումային ընկերություններ Կենտրոնական բանկ Ապահովագրական ընկերություններ *Ամսական/տարեկան*
Կանոնակարգ 3-ով սահմանված թիվ 10 Կանոնադրական կապիտալի ձևավորման վերաբերյալ հաշվետվություն	Սկզբնական եկամուտ-Վերաներդրված շահույթ	Առևտրային բանկեր Վարկային կազմակերպություններ *փոփոխության դեպքում*
Կանոնակարգ 3-ով սահմանված թիվ 5 բանկի եկամուտների և ծախսերի վերաբերյալ հաշվետվություն	Սկզբնական եկամուտ-Վերաներդրված շահույթ Սկզբնական եկամուտ-Պորտֆելային ներդրումներ	Առևտրային բանկեր Վարկային կազմակերպություններ Ներդրումային ընկերություններ Կենտրոնական բանկ *Ամսական/տարեկան*
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008թ. դեկտեմբերի 16-ի թիվ 357-Ն որոշմամբ հաստատված «Կենտրոնական դեպոզիտարիայի՝ կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/04-ով սահմանված Ձև 13 հաշվետվություն արժեթղթերի հաշիվների վերաբերյալ	Պորտֆելային ներդրումներ Ուղղակի ներդրումներ	Կենտրոնական դեպոզիտարիա *Ամսական*
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի	Պորտֆելային	Ներդրումային ծառայություններ

2008 թվականի ապրիլի 22-ի թիվ 140-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց՝ կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 4/03-ով սահմանված (այսուհետ՝ Կանոնակարգ 4/03) «Պահառության վերցված պետական/ոչ պետական արժեթղթերի վերաբերյալ» թիվ 18 հաշվետվական ձև	ներդրումներ Ուղղակի ներդրումներ	մատուցող անձինք *շաբաթական, ամսական*
Կանոնակարգ 4/03-ով սահմանված «Իր կամ հաճախորդի անունից և հաճախորդի հաշվին (իր հաշվին և իր անունից) արժեթղթերով գործարքների կնքման վերաբերյալ» թիվ 6 հաշվետվական ձև	Պորտֆելային ներդրումներ Ուղղակի ներդրումներ	Ներդրումային ծառայություններ մատուցող անձինք *Օրական, ամսական*
Արմստատի կողմից հավաքվող տվյալներ		
ՀՀ վիճակագրության պետական խորհրդի որոշմամբ հաստատված «Միջազգային երթուղիներում մատուցված տրանսպորտային ծառայությունների մասին» Ձև Թիվ 1-Ծառայություն (Տրանսպորտ) պետական վիճակագրական հաշվետվություն	Ապրանքներ	Մասնավոր ոչ ֆինանսական կազմակերպություններ *եռամսյակային*
ՀՀ Վիճակագրության պետական խորհրդի որոշմամբ հաստատված «Ծառայությունների ծավալի մասին» Ձև Թիվ 1-Ծառայություններ (ամսական) պետական վիճակագրական հաշվետվություն	Ծառայություններ	Մասնավոր ոչ ֆինանսական կազմակերպություններ *եռամսյակային*
ՀՀ Վիճակագրության պետական խորհրդի որոշմամբ հաստատված «Բնական գազի արտահանման և ներմուծման մասին» Ձև 1-Գազ (ամսական) պետական վիճակագրական	Ապրանքներ	Մասնավոր ոչ ֆինանսական կազմակերպություններ *ամսական*

հաշվետվություն		
ՀՀ Վիճակագրության պետական խորհրդի որոշմամբ հաստատված Ձև 1-զբոսաշրջություն և Ձև 2-զբոսաշրջություն պետական վիճակագրական հաշվետվություն	Ճանապարհորդություն	Մասնավոր ոչ ֆինանսական կազմակերպություններ *եռամսյակային*
ՀՀ Վիճակագրության պետական խորհրդի որոշմամբ հաստատված «Օտարերկրյա ներդրումների մասին» Ձև 9-Ներդրում (եռամսյակային) «Ոչ ֆինանսական կազմակերպությունների արտաքին պարտավորությունների սպասարկամն մասին» Ձև 9-Պարտավորություն (եռամսյակային) պետական վիճակագրական հաշվետվություն	Սկզբնական եկամուտներ/ եկամուտներ ներդրումներից Ուղղակի ներդրումներ Պորտֆելային ներդրումներ Այլ ներդրումներ	Մասնավոր ոչ ֆինանսական կազմակերպություններ *եռամսյակային*
ՀՀ Վիճակագրության պետական խորհրդի որոշմամբ հաստատված «Կազմակերության հաշվարկների վիճակի վերաբերյալ հաշվետվություն» Ձև 6-ֆ (եռամսյակային) պետական վիճակագրական հաշվետվություն	Այլ ներդրումներ/ Առևտրային վարկեր Այլ ներդրումներ/ Վարկեր	Մասնավոր ոչ ֆինանսական կազմակերպություններ *եռամսյակային*
ՀՀ Վիճակագրության պետական խորհրդի որոշմամբ հաստատված «Տեղեկատվական տեխնոլոգիաների և տեղեկատվական ծառայությունների մասին» (ամսական) Ձև 1-SS (ամսական) պետական վիճակագրական հաշվետվություն	Ծառայություններ/ Հեռահաղորդակցության, համակարգչային և տեղեկատվական ծառայություններ	Տեղեկատվական տեխնոլոգիայի ոլորտի կազմակերպություններ *եռամսյակային*
Հայաստանի Հանրապետություն ժամանումների և մեկնումների սահմանային գրանցումների վերաբերյալ տեղեկությունների՝ ըստ պետական սահմանի անցման կետերի, ճամփորդական փաստաթուղթը տրամադրած երկրների, սեռի և ծննդյան տարեթվի վերաբերյալ տեղեկություններ	Միգրացիոն հոսքերի գնահատում և վերլուծություն	Ազգային անվտանգության ծառայության Սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգ *ամսական*

Ներգնա և արտագնա զբոսաշրջիկների թվաքանակի վերաբերյալ տեղեկություններ	Ծառայություններ/ Ճանապարհորդություն	Ազգային անվտանգության ծառայության Սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգ *ամսական*
Հարցումներ		
Միջազգային այցելուների վերաբերյալ	Ծառայություններ/ Ճանապարհորդություն	ՀՀ ժամանողներ և ՀՀ-ից մեկնողներ *Մուտ 5 տարին 1 անգամ կամ ըստ անհրաժեշտության*
ՀՀ տնային տնտեսությունների կողմից ստացված դրամական փոխանցումների վերաբերյալ	Ծառայություններ/ Ճանապարհորդություն Ծառայություններ/ Շինարարություն Սկզբնական Եկամուտներ/Աշխատողների վարձատրություն Երկրորդային եկամուտներ-Ընթացիկ անձնական տրանսֆերտներ	Տնային տնտեսություններ *Մուտ 3 տարին մեկ անգամ կամ ըստ անհրաժեշտության*
ՀՀ առևտրային բանկերում ֆիզիկական անձանց դրամական փոխանցումների վերաբերյալ	Սկզբնական Եկամուտներ/ Աշխատողների վարձատրություն Երկրորդային եկամուտներ/ Ընթացիկ անձնական տրանսֆերտներ	Առևտրային բանկերի հաճախորդներ *Տարեկան 4 անգամ*
Ադամանդի վերամշակման վերաբերյալ	Ծառայություններ/ Այլ կողմերին պատկանող նյութական ռեսուրսների վերամշակման ծառայություններ	Ադամանդի ներկրմամբ և վերամշակմամբ զբաղվող կազմակերպություններ *Մուտ 5 տարին 1 անգամ կամ ըստ*

		անհրաժեշտության
Մանածագործության բնագավառում հումքի վերամշակման և արտահանման վերաբերյալ	Ծառայություններ/Այլ կողմերին պատկանող նյութական ռեսուրսների վերամշակման ծառայություններ	Մանածագործական արտադրանքի ներկրմամբ և վերամշակմամբ զբաղվող կազմակերպություններ *Մուտ 5 տարին 1 անգամ կամ ըստ անհրաժեշտության*
Բեռնափոխադրողների հարցում	Ծառայություններ/ Տրանսպորտ/ Բեռնատար Ապրանքներ/ ներմուծում ՖՕԲ	
Ոչ առևտրային կազմակերպություններին տրամադրված անհատույց ֆինանսական միջոցների վերաբերյալ	Երկրորդային եկամուտներ Ընթացիկ տրանսֆերտներ Կապիտալ տրանսֆերտներ	Հիմնադրամներ Հասարարակական կազմակերպություններ *Տարեկան*
Այլ հարցումներ՝ տվյալների բացերը լրացնելու նպատակով	Վճարային հաշվեկշռի տարբեր հոդվածներ	Կազմակերպություններ Տնային տնտեսություններ Պետական մարմիններ *Ըստ անհրաժեշտության*
ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հավաքվող տվյալներ		
ՀՀ պետական վարկերի վերաբերյալ տեղեկություն	Այլ ներդրումներ/ Վարկեր	*Ամսական/եռամսյակային*
ՀՀ-ի կողմից ստացված դրամաշնորհների վերաբերյալ տեղեկանք	Երկրորդային եկամուտներ/ Պետական ընթացիկ տրասֆերտներ	*Ամսական/եռամսյակային*
Միջազգային կազմակերպություններին անդամակցության վճարների վերաբերյալ տեղեկանք	Երկրորդային եկամուտներ/ Պետական ընթացիկ տրասֆերտներ	*Ամսական/եռամսյակային*

Այլ վարչական աղբյուրներ		
Ապրանքների առևտրի վերաբերյալ նախնական տվյալներ	Նախնական առևտրի վիճակագրության ձևավորման նպատակով	ՀՀ պետական եկամուտների կոմիտե *ամսական*
Արտերկրներում տեղաբաշխված ՀՀ դեսպանությունների և հյուպատոսությունների որոշ ցուցանիշների վերաբերյալ տեղեկանք	Սկզբնական եկամուտներ/ Սեզոնային աշխատողների աշխատավարձ Ծառայություններ/ Գործառնական վարձակալության ծախսեր Ծառայություններ/ Պետական ապրանքներ և ծառայություններ Երկրորդային եկամուտներ/ Ընթացիկ տրանսֆերտներ	Արտաքին գործերի նախարարություն *եռամսյակային*
Տրանսպորտային միջոցների սահմանահատումների վերաբերյալ տեղեկանք	Ապրանքներ՝ ձեռք բերված տրանսպորտային կայաններում Ծառայություններ/ Տեխնիկական սպասարկման և վերանորոգման ծառայություններ	Ազգային անվտանգության ծառայություն *եռամսյակային*
ԱՌՔԱ ազգային օպերատորից ստացվող տեղեկություն քարտերով իրականացված գործարքների վերաբերյալ	Ծառայություններ/ մի քանի տեսակի ծառայությունների ներմուծման մասով Ապրանքներ/ դեբետ	ԱՌՔԱ *եռամսյակային*
Լրացուցիչ աղբյուրներ		

Միջազգային հաշվարկների բանկի (BIS) տվյալներ	Այլ ներդրումներ/ավանդներ	*Եռամսյակային*
Այլ երկրների կողմից ՀՀ-ի վերաբերյալ հրապարակվող տվյալներ	Տարբեր հոդվածներում տվյալների համադրության և բացերի լրացման նպատակով	*Պարբերաբար*
Մամուլի հաղորդագրություններ	Տարբեր հոդվածներում տվյալների համադրության և բացերի լրացման նպատակով	*Պարբերաբար*